

Հայաստանի Անկախութեան 25-Ամեակը Նշուեցաւ Զինուորական Շքերթով

Սեպտեմբեր 21-ին՝ Հայաստանի անկախութեան 25 ամեակին նուիրուած զօրահանդէս տեղի ունեցաւ Երեւանի Հանրապետութեան հրապարակի վրայ:

Զօրահանդէսին ներկայ էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան, ԼՂՀ նախկին նախագահ Արկատի Ղուկասեան, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակեան, ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան, ՀՀ անվտանգութեան խորհուրդի անդամներ, պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, բարձրաստիճանի գինուորականներ, սփիւռքեան կառույցներու ներկայացուցիչներ, օտարերկրեայ ղեկանավարական ներկայացուցիչներու ղեկավարներ եւ հիւրեր:

Զօրահանդէսի հրամանատարն էր Զօրքերու միացեալ խմբաւորման հրամանատար՝ Անդրանիկ Մակարեանը: Զօրահանդէսը ընդունեց ՀՀ պաշտպանութեան նախա-

րար Սէյրան Օհանեանը:

Զօրահանդէսի ընթացքին հանդիսաւոր երթով անցան ՀՀ Զինուած ուժերու ստորաբաժանումները եւ ցուցադրուեցաւ ԶՈՒ ռազմական գինատեսակները:

Զօրահանդէսի ընթացքին ցուցադրուեցան հայկական բանակի նորագոյն ձեռքբերումները՝ հեռահար «Իսկանդեր» հրթիռային համալիրներ, համազարկային կրակի հակազդեցիկ՝ «Սմերչ» համակարգեր, հակաօդային պաշտպանութեան համար նախատեսուած «Բուկ» զենիթահրթիռային համալիրներ եւ ռատիոէլեկտրոնային պայքարի նորագոյն՝ «Ինֆաունա» համակարգ:

Անկախութեան 25-ամեակի առթիւ հանդէս գալով շնորհաւորական խօսքով, նախագահ Սերժ Սարգսեան ընդգծեց, որ Հայաստան վճռական է պաշտպանելու իր ազատութիւնը. «Մենք ընտրած ենք ազատութիւնը՝ Հայկ Նահապետի ժամանակէն: Մենք հաւատարիմ ենք այդ ընտրութեան, որ նետուղեղի ժամանակներուն կատարած ենք: Այսօր՝ 21-րդ դարուն, զէնքերը փոխուած են, բայց չենք փոխուած մենք՝ սեփական



Հայկական բանակի արդիական հրթիռները կը տողանցեն Երեւանի մէջ

ազատութիւնը պաշտպանելու մեր վճռականութեամբ: Վկան այս զօրահանդէսն է»:

Յատկանշական էր, որ Սարգսեան կարեւորեց նաեւ ազատ հասարակութեան կայացումը. «Մեր քաղաքացիները եւս պէտք է ազատ ըլլան, որովհետեւ ազատ մարդն ու ազատ հասարակութիւնը անհամեմատ աւելի արդիւնաւէտ կը գոր-

ծեն: Մենք կարող ենք եւ պէտք է շարունակենք կառուցել արդիւնաւէտ երկիր, որ կը պաշտպանէ ազատ քաղաքացիին եւ ազատ հասարակութեան»,- ըսաւ նախագահը:

Այս առթիւ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիս-

Շար.ը էջ 5

Լուս Անճելըսի Մէջ Շքեղ Փառատօնով Նշուեցաւ Անկախութեան 25-Ամեակը



Տեսարան մը Հայաստանի անկախութեան 25-ամեակի փառատօնէն

Կիրակի, Սեպտեմբեր 18ին աւելի քան տասն հազար հայեր, Կլէնտէյլի «Վերտիկո Փարք» զբօսայգիին մէջ, ներկայ եղան ժողովրդային շքեղ փառատօնի մը, նուիրուած Հայաստանի անկախութեան 25-րդ տարեդարձին:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, 18րդ տարին ըլլալով կազմակերպած էր սոյն փառատօնը, ստեղծելով մեծ ոգեւորութիւն ժողովրդային լայն շրջանակներու մօտ: Արդարեւ, Հայրենիքէն հազարաւոր մղոններով հեռու, բայց հայրենաբաղձ սիրտով այստեղ ապաստան գտած մեր հասարակութեան համար իսկական տօնախմբում մըն էր, բառին բովանդակ իմաստով:

Ամենուրեք ակներեւ էր տօնական մթնոլորտ: Ընդարձակ զբօսայգիին մէջ համատարած էր երգն ու նուազը: Բազմաճազար այցելուներու համար ստեղծուած էին ամէն տեսակի յարմարութիւններ: Տասնեակներով տաղաւարներու մէջ վաճառքի հանուած էին այլազան իրեղէններ, հայկական յուշանուէրներ, Հայաստանեան արտադրութիւններ, ուտելիքներ եւ այլն: Ստեղծուած էին նաեւ մանկական ժամանցի բաժիններ: Ուշագրաւ էին հայկական համադրամ ճաշերու տաղաւարները:

Կէսօրէ ետք գործադրուեցաւ օրուան տօնին պատշաճ յայտագիր

Շար.ը էջ 5

ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը

Հայաստանի Հանրապետութիւնը 25 տարեկան է:


Համայն հայութիւնը, անկախութեան 25-րդ տարեդարձը կը տօնախմբէ անոր դիմագրաւած բազում մարտահրաւերները դիմակայելու իր անմնացորդ նուիրումն հպարտութեամբ:

Արդար է այդ հպարտութիւնը. որովհետեւ անկախութեան բերած բարիքները շօշափելի իրականութիւններ են այսօր: Կայացած է հայկական բանակը. Հայրենիքի արժէքը դարձած է գերադաս ազգային, կրօնական, գաղափարական ու բազում այլ արժէքներ: Ամէն բանի առանցքը Անկախ Հայաստանն է. անոր անվտանգութիւնը, ապահովութիւնը եւ զարգացումը:

Անցնող 25 տարիներուն, մեր երազած անկախութիւնը իր ձեռքբերումներուն կողքին, տուաւ նաեւ յուսաբեկումներ: Դժբախտաբար, այսօրուան Հայաստանը ընկերային արդարութեան երկիրը չէ եւ ժողովուրդին մօտ օրաւոր կը նուազի այդպիսին ըլլալու յոյսի մշոյլը: Իրարայաջորդ իշխանաւորներուն ապօրինի միջոցներով դիզած հարստութիւնները, ժողովուրդին մօտ ստեղծած է ոչ միայն անվտանգութիւն այս կամ այն իշխանաւորին հանդէպ, այլ ատելութիւն իշխանութիւն հասկացութեան հանդէպ: Կարելի է անվարան ըսել որ այսօր, անկախ Հայաստանի քաղաքացիներուն մեծ տոկոսին համար, իշխանութիւնը այլ բան չէ, եթէ ոչ պարզ ժողովուրդին արդար վաստակը լափող մարդկանց խումբ մը: Իսկ իշխանութեան համար պայքարը՝ այդ շահութաբեր միջոցին տիրանալու պայքար:

Անկախութեան 25 տարիներուն Հայաստան դիմագրաւեց շատ մարտահրաւերներ. Արցախի ազատ ինքնորոշման իրաւունքին դէմ Ատրպէյճանի ջղաձգութիւնները, միջազգային տնտեսական տագնապներուն ազդեցութիւնը, շրջափակումը, դէպի ծով ելքի բացակայութիւնը, եւ այլն: Ասոնք մօտիկ ապագային եւ միայն Հայաստանի ցանկութեամբ լուծուող հարցեր չեն: Հիմնական հարցը որ կը կարօտի շուտափոյթ լուծման եւ կախուած չէ արտաքին ազդակներէ՝ ընկերային իրավիճակի արմատական բարեկարգութիւնն է:

Շար.ը էջ 3



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

25 Տարեկան Դարձած Անկախ Հայաստանի Տեսլականը

Անկախ Հայաստանի Հանրապետության 25 տարեկան է: 21 Սեպտեմբեր 1991-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած հանրաքուէի հիմքով՝ Գերագոյն Խորհուրդը Հայաստանի Հանրապետութիւնը կը հռչակէր անկախ պետութիւն:

Շրջանային մեծ ու անկանխատեսելի տեղաշարժերով ու Խորհրդային Միութեան փլուզումով երեւան եկած պայմանները, հայ ժողովուրդը կը դնէին պատմական ընտրութեան մը առաջ, որուն դիմաց պէտք էր ցոյց տալ վճռական կեցուածք:

Մեր ժողովուրդը քաջ գիտակցելով այդ պատմական պահուն ստեղծած անխուսափելիութիւնը կը վճռէր քալել անկախութեան ճանապարհով ու վճռական եւ կարեւոր այդ քայլը կը դառնար նոր փուլի մը մտնելու հիմնարար կռուան:

Պատերազմ Արցախի մէջ, 88-եան երկրաշարժի ծանր հետեւանքներուն տակ կքած քաղաքներ, ընկերային ու տնտեսական բարդ դրութիւն, արտագաղթ, բայց այս բոլորին մէջ մեր ժողովուրդը կը կարեւորէր ապրիլ անկախ ու սկիզբ տալ նոր ճանապարհի մը, որով ապրիլ կերտէր հայութեան համար տեսլական մնացած երկրի իրական սահմանները:

Սահմանը կը կերտուէր արիւնով ու հակառակ տարբեր ոլորտներու մէջ եղած բազում բացթողումներուն ու նոյնիսկ հոգեթողութեան, հայոց նորակազմ բանակի ասպետները իրենց «կրակէ մկրտութիւնը» ստանալով կը գծագրէին մեր հերոսական երկրի անառիկ սահմանները:

1994-ին կը կնքուէր հրադադար ու այդ բոլորէն յաղթանակած դուրս եկած մեր երկիրը կը մտնէր նոր հուն մը ու դանդաղ քայլերով կը բռնէր վերակառուցումի ճամբան:

Ճամբայ մը՝ փուշերով եւ որոգայթներ լեցուն, որուն բոլոր անկիւնադարձներուն մէջ հայութիւնը «մէկ սիրտ ու մէկ հոգի» կը դիմակայէր բոլոր դժուարութիւնները:

Այս բոլորին զուգահեռ այն ինչ, որ տեղի կ'ունենար երկրի քաղաքական կեանքի շերտերուն մէջ մեծ հոգեւթութեան առիթներ կը ստեղծէր ամբողջ հայութեան համար:

Պատերազմին ստեղծած միասնականութեան մթնոլորտը կը փոխուէր ու բոլորս ակամատես կ'ըլլայինք բաւական դառն ճշմարտութիւններ իր մէջ ընդունուած Հայաստանի մը, որ մեզի համար հեռու էր իտեալական երկիր մը ըլլալու հրամայականէն:

Այս ճանապարհին, աւելի յստակ կը դառնար, որ մեր երկիրը տակաւին ունի բազում եւ բազմապիսի խնդիրներ, որոնց լուծման համար հարկաւոր է ունենալ համազգային կամք:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան առաջին տարիներուն հայութիւնը կ'ապրէր տարաբնոյթ եւ ներքին շիկացումով երեւելի դարձած տագնապներ, որոնք ժամանակի ընթացքին կը վերանային:

Այսօր արտաքին ճակատի ու սփիւռքի համար հիմնական կէտ համարուող Ցեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան օրակարգերուն շուրջ 25 տարեկան անկախութիւն ապրած Հայաստանը յաջողած է համախմբել ամբողջ հայութիւնը:

Քաղաքական, ընկերային, յարանուանական, գաղափարական տարբերութիւնները յարգելով Հայաստանը դարձաւ բոլորին համար իրական տուն ու մշտական ամրոց:

Այդ բոլորի կողքին սակայն, մեր երկիրը ունեցաւ ծանր նահանջներ: Այդ նահանջներուն ամենէն ցայտունը, Հայաստանի ու հայութեան համար աղէտալի հետեւանքներ ունեցող արտագաղթի ալիքն էր, որ ցայսօր ալ կը շարունակէ արիւնահոսող վերքի մը պէս սպառնալ բոլորիս:

Այս բոլորէն զատ, եթէ Խորհրդային Կարգերէն դուրս ելած եւ նոր յարաբերութիւններով ու տնտեսական մօտեցումներով ինքզինք գտնող երկիրը զառնուեցաւ «նոր հարուստներու» եւ «ծաւալող» օլիկարխներու ստորեային գործունէութեան մը, որուն հետեւանքով երկրին մէջ կը սերտաճէր մեծաշնորհային քաղաքականութիւնը, արգելք դառնալով իրական եւ անկեղծ մրցակցութեան պայմաններու հասունացումին:

Սովորական հայ մարդը կը տուժէր Հայաստանի մէջ: Հայ մարդը կը նահանջէր Հայաստանի մէջ ու ատոր համար էր նաեւ, որ ՀՀ քաղաքացիին համար անկախութեան երազը շատ պահերու կը դառնար ծանր ու սարսափեցնող մղձաւանջ:

Կը զարգանար երեւանը, բայց Հայաստանի սահմանային գիւղերն ու շէները կը մնային լքուած ու անտեսուած:

Կը զարգանային հայութեան համար սիրտ համարուող քաղաքամայր երեւանի փողոցներն ու թաղամասերը, բայց անկէ դուրս ու քանի մը քիչմեքր հեռաւորութեան վրայ գտնուող շրջանները կը մնային լքուած իրենց տխուր ճակատագրին: Տակաւին կը խօսուէր համակարգային բարեփոխումներու մասին, հանգրուանի մը, ուր Հայաստանի իշխանութիւններուն համար մինչեւ այս պահը բարեփոխում կատարելը կը մնար սոսկ խօսքի սահմաններուն մէջ:

Այլ ծանր իրադրութիւն մը կը տիրէր ներքին- քաղաքական կեանքին մէջ, ուր քաղաքական պայքարները կը տարուէին անհատներու եւ ոչ ծրագիրներու շուրջ:

Հակառակ անոր, որ սահմանադրութեան բարեփոխումները կը

դառնային իրականութիւն, այսօր եւս Հայաստանին կը պակսի լուրջ եւ ամենակարեւորը ծրագիրներով առաջնորդուող ընդդիմութիւն մը, որուն հիմնական նպատակը պիտի ըլլայ ունենալ տեսիլք՝ ընկերային արդարութեամբ, ժողովրդավար հիմունքներով եւ հաւասարութեամբ կառավարուող երկիր մը կերտելու:

Միջին Արեւելքի մէջ ընթացող զարգացումներուն զուգահեռ, Հայաստանը այսօր կը հանդիսանայ փոքր ու ապահով «կղզեակ» մը, որ շրջապատուած է մեծ ու փոքր թշնամիներով: Այս խօսքին մեծագոյն ապացոյցը եղաւ անցնող ապրիլին արցախեան քառօրեայ պատերազմը, որ աւարտեցաւ մեր սխրալից տղաներու փայլուն պատասխանով:

Ատրպէյճանի ստիպուեցաւ խնդրել Մոսկուայի անմիջական միջամտութիւնը ու 5 Ապրիլին «վերանորոգուած» հրադադարը նոր հուն բացաւ արցախեան հակամարտութեան տարեգրութեան մէջ:

Պատերազմը եկաւ ըսելու, որ Հայաստանի հիմնական հակառակորդը արթուն է ու դարանակալ ու ատոր դիմաց մեր երկիրը պարտաւոր է ամէն գնով սրբագրել առկայ բոլոր բացթողումները եւ հաւաքապէս նուիրուիլ Արցախի պաշտպանութեան սրբազան գործին:

Արցախի մէջ եղած դէպքերէն ետք ծանր էր նաեւ Էրեւանիի ՊՊԾ կեդրոն մուտք գործած «Սասնայ ծռերու» տղոց արարքը: Գաղտնիք ալ չէր, որ այս արարքը, հակառակ իր ծայրայեղական գործելաոճին, իր մէջ կը պարբակէր բաւականին կարեւոր պատգամներ:

Ընկերային անհաւասարութեան, անարդարութեան, դատական համակարգի խոցելիութեան եւ հովանաւորչական մօտեցումներուն դէմ եղած «Սասնայ ծռերու» արարքը կը բանար կարեւոր հարցադրումներու տոպրակը:

Դէպի ո՞ր կ'երթայ 25-ամեայ Հայաստանը: Ամենակարեւորը՝ ինչ պէտք է ընել դրական ընդհանուր մթնոլորտ մը աճեցնելու մեր ժողովուրդի լայն շերտերուն մօտ:

Բնականաբար այս հարցումներու պատասխանները կը գտնուին ՀՀ իշխանութիւններուն մօտ, որոնք այսօր աւելի քան որեւէ ժամանակ, պարտաւոր են «վիրաբուժական գործողութիւններ» կատարելով փրկել ընդհանուր վիճակը:

Որպէսզի ի զուր հեղած չհամարուի Հայաստանի անկախութեան ճամբուն վրայ անձնուէր ազատամարտիկներու ու տարբեր պայմաններու տակ նահատակուած հազարաւոր նահատակներուն արիւնը այսօր ատենն է, որ ազգովին ու անգամ մը եւս համախմբուինք Անկախ Հայաստանի իրական տեսլականին շուրջ:

Որպէսզի այսօրուան անկախութիւնը վերանորոգուի իսկական եւ մնայուն արժէքներով:

Որպէսզի Հայաստանի Հանրապետութեան բոլոր ձեռքբերումները դառնան մշտական հիմունքներ:

Որպէսզի Հայաստանի Անկախ Հանրապետութեան բոլոր լուսաւոր կէտերը տարածուին ամբողջ հայաշխարհին մէջ:

Հայաստանն ու հայութիւնը պարտաւոր են ամէն գնով պահպանել ու գործել անկախութեան տեսլականով, որուն ամենէն փոթորկոտ ջուրերուն մէջ կը պահուի հայութեան մեծ երազներուն մշտաւառ ջահը:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
ՄՈՏԻՎԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆԱՄԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ՝ ՎԱՐԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ


MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party**
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային երեք կուսակցություններու՝ Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան կուսակցութեան, Զայ Զեղափոխական Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի ղեկավար մարմիններս, յանուն մեր շարքերուն եւ համակիր շրջանակներուն կ'ողջունենք Զայաստանի անկախ հանրապետութեան 25-րդ տարեդարձը եւ այս առթիւ կը յայտարարենք.

ա.- Մեր աներեր նուիրումը՝ Զայաստանի անկախ պետականութեան հզօրացման գործին:

բ.- Մեր մտահոգութիւնը, թէ՛ Զայաստանի 25-ամեայ երիտասարդ հանրապետութիւնը տակաւին կը դիմագրաւէ արտագաղթի հարցը: Մեր խորին համոզումն է, որ արտագաղթի կասեցման նպատակով պէտք է անյապաղ քայլեր ձեռնարկուին երկրի ընկերային եւ տնտեսական իրավիճակի, դատաիրաւական համակարգի հիմնովին փոփոխութիւններու եւ բարեկարգելու ուղղութեամբ:

գ. Մեր համոզումը, որ՝ Արցախեան հարցի լուծումը հնարաւոր է միայն բանակցային խաղաղ գործընթացներով. դէմ ենք սակայն՝ հող խաղաղութեան համար հնչեցուող փոխզիջման տարբերակին, եւ կը հաստատենք, որ Արցախի ազատագրումն ոչ մէկ տարածք կրնայ զիջումի առարկայ ըլլալ:

դ.- Մեր վճռականութիւնը՝ հայրենի ժողովուրդին թեւ ու թիկունք կանգնելու եւ իրենց արդար ու բարգաւաճ երկիր կառուցելու ձգտումներուն սատարելու:

ե.- Գործակցութիւնը՝ որպէսզի Զայաստանի Զանրապետութենէն ներս ժողովրդավարութիւնը եւ մարդու իրաւունքները կիրարկուին ամենալայն չափերով:

զ.- Վերջապէս, Արեւմտեան Միացեալ Նահանգներու հայ համայնքի կարողականութեան առաւելագոյն կազմակերպումով ու համագործակցութեան մթնոլորտի ամրապնդման ճամբով՝ նոր որակով Զայաստանի ու Արցախի անվտանգութեան ապահովման ու զարգացման ի նպաստ աշխատանքները յառաջ տանելու յանձնարութիւնը:

Կեցցէ Զայաստանի Անկախ Պետականութիւնը,
Կեցցէ Զայաստանն ու Արցախը,
Կեցցէ հայ ժողովուրդը:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ԶԱՅ ԶԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՍՄՏԵ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Լոս Անճելըս, Սեպտեմբեր 19, 2016

Յայտարարութիւն

Շարունակուած էջ 1-էն

Արտաքին թշնամիներ եւ դժուարութիւններ չունենալը միայն Զայաստանի կամքով չէ. սակայն զանոնք ներքին բոլոր ուժերու համադրումով դիմակայելը մեզմէ կախեալ է և կը կատարուի միայն ընկերային արդարութեան վրայ հենած պետութեամբ մը, ուր, մինչեւ ամենէն հետին քաղաքացին ինքզինք երկրին տէրը կը զգայ:

Անկարելի է հրաժարիլ Անկախութենէն. անկարելի է նաեւ ընդունիլ, որ անոր հանդէպ հաւատքը նուազի, այդ վտանգուի և Զայաստանի քաղաքացին իր արդար պահանջներուն ու բողոքներուն լուծումը չգտնելով, պարտաւորուի լքել իր հայրենիքը, ա՛լ աւելի խորացնելով արտագաղթի արատաւոր երեւոյթը:

Չամատարած եւ արմատական ընկերային բարեփոխութիւն: Այս է անկախութեան 25 ամեակին հրամայականը եւ այս պիտի ըլլայ Ս.Դ.Զ.Կ.-ի եկող տարիներու լոզունգը: Մինչեւ այն պահը, երբ պարզ քաղաքացին իր հայրենիքին մէջ ինքզինք անպաշտպան, օտարացած, երկրորդ դասի քաղաքացի կը զգայ: Մինչեւ այն օրը երբ քաղաքացին համոզուի որ իր հետ անմիջական յարաբերութեան մէջ եղող պետական մարմինները՝ առաջնահերթաբար ուստիկանութիւնը, դատարանը, հարկայինը՝ իր իրաւունքները, ապահովութիւնը եւ կարգուկանոնը պաշտպանող կառոյցներ են եւ ոչ թէ իր մաշկին թառած մակաբոյծներ: Մինչեւ որ Զայաստանի քաղաքացին իրապէս համոզուի թէ, որպէս այդպիսին, ի՛նք է այս երկրին գերագոյն արժէքը:

Ս. Դ. ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 21, 2016, ԵՐԵՎԱՆ

ԼՂԶ Նախագահ Բակո Սահակեան Ընդունեց ՍԴԶԿ Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութիւնը



ԼՂԶ նախագահ Բակո Սահակեանի հանդիպում կ'ունենայ ՍԴԶԿ պատուիրակութեան հետ

ԼՂ Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան Սեպտեմբեր 18-ին ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ Համբիկ Սարաֆեանի ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Վազգէն Գալթաքճեանի եւ Խաչիկ Քէշիշեանի:

Հանդիպման քննարկուած են Արցախի ներքին եւ արտաքին հարցերը, ինչպէս նաեւ Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականութեան, ատրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման եւ Հայրենիք-Սփիւռք կապերուն առնչուող շարք մը հարցեր:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակեան կարեւորած է աւանդական կուսակցութիւններուն հետ սերտ փոխգործակցութիւնը՝ այն համարելով պահանջուած եւ կարեւոր համազգային խնդիրներու լուծման համար:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ՝ Բակո Սահակեանին հետ մեր ունեցած

հանդիպման ընթացքին այլ խնդիրներու կողքին, մասնաւորապէս քննարկեցինք Արցախի սահմանային բնակավայրերու հարցը», - «Արեւելք» կայքէջին ըսաւ ՍԴԶԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեան: Սարաֆեան նաեւ նշեց, որ ինչ ալ որ ըլլան Արցախեան հիմնախնդրի լուծման տարբերակները, սահմանային համայնքներու եւ զիւղերու բարելաւման եւ ամրացման հարցը պէտք է մնայ հայրենի եւ սփիւռքեան մարմիններու ուշադրութեան կեդրոնը: «Մենք կը գիտակցինք, որ Արցախի սահմանները պահպանող մեր հերոսական բանակը պէտք է ունենայ ամուր թիկունք եւ բարօր ու ապահով պայմաններու մէջ ապրող բնակչութիւն», - դիտել տուաւ Սարաֆեան, առաջարկելով, որ «Արցախի վերաբնակեցման ամրապնդման համար հարկաւոր է ստեղծել համահայկական մարմին մը, որուն հիմնական աշխատանքը պիտի ըլլայ հայութեան միասնական բոլոր ջանքերը ծառայեցնել սահմանային գօտիներու մօտ եղող շրջաններու բարգաւաճման եւ զարգացման ի խնդիր»:

Զնչակեան Պատուիրակութեան Զանդիպումները Արցախի Մէջ

Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամներ այցելելով Արցախ հանդիպումներ ունեցած են ԼՂՀ պատասխանատու մարմիններու հետ: Այս ծիրէն ներս պատուիրակութիւնը գլխաւորութեամբ ՍԴԶԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեանի այցելած է ԼՂՀ Առողջապահութեան նախարարութիւն, ուր հանդիպում մը ունեցած է նախարար Կարինէ Աթայեանին հետ:



Զնչակեան պատուիրակութեան անդամները Արցախի Առողջապահութեան նախարար Կարինէ Աթայեանին հետ

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են Արցախի ընդհանուր առողջապահական ոլորտը: Համբիկ Սարաֆեան այս մասին խօսելով Պէյրութի «Արարատ» օրաթերթին ընդգծած է, որ այսօր հիմնական առաջնահերթութիւն կը հանդիսանայ նեցուկ կանգնիլ եւ օժանդակել Արցախի առողջապահական ոլորտի տարբեր բաժանմունքներուն, որոնց ամէնէն հիմնական հիւանդանոցներն են:

Ընկ. Սարաֆեան նաեւ յայտնած է, որ ՍԴԶԿ-ն Արցախի առողջապահական ոլորտի հիմնական

պէտքերը հոգալու նպատակով պատրաստած է յատուկ ծրագիրներ, որոնք պիտի իրագործուին ՀԿԲՄ-ի անմիջական աջակցութեամբ նկատել տալով նաեւ, որ յառաջիկայ հանգրուանին այդ մասին պիտի իրագրեկուի մամուլին:

Նշենք, որ ՍԴԶԿ Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը գլխաւորութեամբ ատենապետ ընկերըջ եւ մասնակցութեամբ ընկերներ Վազգէն Գալթաքճեանի եւ Խաչիկ Քէշիշեանի այցելութիւններ տուած են Ասկերանի եւ Մարտակերտի հիւանդանոցներ մօտէն ծանօթանալու համար այնտեղ տիրող ընդհանուր իրավիճակին:

ԼՈՒՐԵՐ

Հայկական Բանակը Ստացած է «Իսկանդեր» Համակարգ



WWW.RAZM.INFO

«Իսկանդեր» հրթիռային համակարգ մը, Երեւանի մէջ տեղի ունեցած զօրահանդէսի ընթացքին

ՌԴ ռազմարդիւնաբերական համալիրի տնօրէնները հաստատած են «Իսկանդեր» համալիրի տրամադրումը հայկական բանակին՝ մէկ բաժանմունքի քանակով: Անոնք յստակացուցած են, որ «Ռուսօրրոնէքսպորտը», որեւէ առնչութիւն չ'ունի անոր հետ, քանի որ այդ գիտատեսակը ձեռք բերուած է ՀԱՊԿ շրջանակի գէնքի առաքումներու մասին համաձայնագրի հիման վրայ՝ շրջանցելով պետական միջնորդին, կը գրէ «Վեդոմոստին»:

«Իսկանդեր» համակարգը առաջին անգամ ցուցադրուեցաւ Սեպտեմբեր 21-ի Անկախութեան 25-ամեայ տարեդարձին նուիրուած ռազմական շքերթի փորձի ժամանակ: Ինչպէս յայտնի է, ՌԴ-ն ու Հայաստանը 200 մ ըն. տոյրի գէնքի մատակարարման պայմանագիր ունին, որու գումարը վարկի տեսքով տրամադրած է Ռուսաստանը: «Իսկանդեր» համալիրը այդ փաստաթղթերին մէջ չէ յիշուած եւ ըստ տնօրէնին, այդ գիտատեսակի առաջման մասին պայմանագիրը կնքուած է այդ վարկէն դուրս:

Ըստ պահեստի գնդապետ՝ Վիքթոր Մուրախովսկիի, «Իսկանդեր» առաջման հնարաւոր նուազագոյն քանակը 1 բաժանմունք է 4 գործարկող սարքով՝ երկու քական հրթիռ իւրաքանչիւրին: Ըստ անոր, կարելի է ենթադրել, որ ճիշդ այդ քանակը առաքուած է Հայաստան: Հրթիռը արդիւնաւէտ միջոց է հրամանատարական շտաբերու եւ հրետանիի, ինչպէս նաեւ՝ հակադրեցիկ հրետանիի խոցման համար: Այդ պատճառով, կարելի է հայկական բանակին:

Ըստ «Վեդոմոստի» գրուցակիցին, «Իսկանդեր» լուրջ միջոց կը դառնայ Ատրպէյճանի դաշնային համար: չէ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան, 2014-ի Սեպտեմբերին յայտարարեց, որ Հայաստանի գիտուած ուժերը կը համալրուին նոր հեռահար գէնքով: Նախապէս, պաշտպանութեան նախարարը ըսած էր, որ նոր՝ «հեռահար, գերճշգրիտ» սպառնալիցութեան ձեռքբերումը կ'աւարտի 2014-ին: Բացառուած չէ, որ խօսքը ռուսական «Իսկանդեր» գործնական ռազմավարական հրթիռային համակարգի արդիականացուած նախատիպի մասին է:

«Մատրիտեան Սկզբունքները Պետք է Վերանայուին»,- Շաւարշ Քոչարեան

Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման Մատրիտեան սկզբունքները պէտք է վերանայուին: «Արմենիափրէս»-ի փոխանցմամբ՝ նման յայտարարութեամբ, Սեպտեմբեր 15-ին, լրագրողներու հետ զրոյցին հանդէս եկաւ՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարի տեղակալ՝ Շաւարշ Քոչարեանը:

Ըստ անոր՝ ապրիլեան դէպքերէն յետոյ անհրաժեշտութիւն առաջացած է լրջօրէն վերանայիլ այն փոխզիջումներուն, որոնք տեղ գտած էին Մատրիտեան սկզբունքներուն մէջ:

«Այնտեղ կար Արցախի մէջ յետաձգուած հանրաքուէ անցընելու մասին դրոյթ: Անոր նպատակն էր, որ այդ ժամանակահատուածի ընթացքին, Պաքու պէտք է նախապատրաստէ իր հասարակութեան այն մտքին, որ Լեւոնային Ղարաբաղը Ատրպէյճանի կազմին մէջ պիտի չ'ըլլայ: Բայց այդ ժամանակը անօտաւարօրէնց ապրիլին այլ նպատակով: Այդ իրավիճակին բանակցային ո՛չ գործընթաց, ո՛չ առաջընթաց չի կրնար ըլլալ: Ամէն ինչ կախուած է պայմանաւորուածութիւնները կեանքի կոչելէն: Կը քննարկուի, թէ պէտք է հրադադարի համակարգը ամրապնդուի, վերջ դրուի ատրպէյճանական քանդումներուն, աւելնան ԵԱՀԿ առաքելութեան լիազօրութիւնները»,- ընդգծեց ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը:

Գլխաւոր Դատախազի Պաշտօնը Վստահուեցաւ Արթուր Դաւթեանին

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովը փակ քուէարկութեամբ Հայաստանի գլխաւոր դատախազ ընտրած է ՀՀ գլխաւոր դատախազի ժամանակաւոր Արթուր Դաւթեանը: Մինչ այդ Դաւթեան ՀՀ գլխաւոր դատախազի տեղակալն էր:

Կողմ քուէարկած է 97 պատգամաւոր, դէմ՝ 3: Իսկ 3 քուէարկութիւն անվաւեր ճանչցուած է: Քուէարկութեան մասնակցած է 103 պատգամաւոր: Նշենք, որ ՀՀ գլխաւոր դատախազի պաշտօնը թափուր է Օգոստոս 4-էն, երբ Գէորգ Կոստանեան

Freedom House-ը Հայաստանը կը Դասէ Մասնակի Ազատ Երկիրներու Շարքին

Հայաստանը «մասնակի ազատ» երկիր է: Նման գնահատական տրուած է Freedom House-ի «Աշխարհի մէջ ազատութեան մասին-2016» գեկոյցին մէջ:

Ըստ գեկոյցին, Հայաստանը 46 միաւոր հաւաքած է (ամենավատ ցուցանիշը 0-ն է, լաւագոյնը՝ 100-ը):

«Աշխարհի մէջ ազատութեան մասին-2016» գեկոյցը կը գնահատէ 2015-ի ազատութեան վիճակը 195 երկիրներու եւ 15 տարածքներու մէջ, որոնք չունին պետականութիւն: Ձեկոյցը կը գնահատէ իրաւունքներու եւ ազատութիւններու վիճակը, որոնցմէ կ'օգտուին առանձին մարդիկ, ոչ թէ կառավարութիւնը կամ իշխանութեան ներկայացուցիչները:

Քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքները կը գնահատուին 1-7 միաւորի սանդղակով, որտեղ 1-ը առաւելագոյն ազատութեան ցուցիչն է, իսկ 7-ն՝ նուազագոյն: Հայաստանը համապատասխանաբար ստացած է 4 եւ 5 միաւոր:

Յատկանշական է, որ Freedom House-ը կը դիտարկէ նաեւ Լեւոնային Ղարաբաղը որպէս անկախ պետութիւն՝ դասելով դաշն «մասնակի ազատ երկիրներու շարքին»: Ղարաբաղը ընդհանուր առմամբ ստացած է 33 միաւոր:

Վրաստանն ու Թուրքիան 64 եւ 53 ցուցանիշներով նոյնպէս կազմակերպութեան կողմէ դասուած են

«մասնակի ազատ» պետութիւններու շարքին, մինչդեռ Իրանի ու Ատրպէյճանի մէջ վիճակը շատ աւելի վատ է: Freedom House-ը 17 եւ 16 ցուցանիշներով այդ երկիրները կը համարէ անազատ:

Ռուսաստանն ու Պելառուսը եւս անազատ են:

Ազատ երկիրներու թիւը, ըստ կազմակերպութեան կը հասնի 85-ի, որտեղ կ'ապրի բնակչութեան մօտ 40%-ը: «Ազատ երկիրներու» թիւը 2014-ի համեմատ նուազած է 3-ով:

«Անազատներու» թիւը կը հասնի 59-ի: Այդ պետութիւններու բնակիչները կը կազմեն մոլորակի 24%-ը: Մասնակի ազատ երկիրներու ցանկը աւելցած է 4-ով:

«Անազատ» երկիրները 50 են, որտեղ կը բնակին մոլորակի 36%-ը՝ 2,6 մլրդ մարդ, որուն կէսը կ'ապրի Չինաստանի մէջ: «Անազատ երկիրներու» ցանկը կը ճատուած է 1-ով, քանի որ Զիմպապուէյը «անազատներու» շարքին անցած է «մասնակի ազատներու» շարք:

«Վատագոյններու» կարգին դասուած են՝ Էրիթրիա, Հիւսիսային Գորիա, Ուզպեքիստան, Սոմալի եւ Սուրիա:

Freedom House-ը 2015-ի աւարտին բնութագրած է Հայաստանը, որպէս համացանցի մէջ ազատ երկիր՝ 28 միաւորով: 2016-ի Ապրիլին, կազմակերպութիւնը ՀՀ-ն համարած է «անազատ»՝ 21Մ-ներու իրաւունքներու տեսակէտէն:

Ֆրանսայի Ծերակոյտի Յանձնաժողովը Օրինագիծէն Հանեց Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Յօդուածը

Ֆրանսայի խորհրդարանի վեբին պալատի՝ Սենատի յանձնաժողովը «Հաւասարութիւն եւ քաղաքացիութիւն» օրինագիծէն հանեց այն յօդուածը, որ կը վերաբերէր ցեղասպանութիւններու եւ մարդկութեան դէմ գործուած ոճիւրեղութեան ժխտումը պատժելուն:

Այս լուրը յատուկ հաղորդագրութեամբ տարածած է Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդը՝ միաժամանակ արտայայտելով իր վրդովմունքը:

«Սենատի այդ որոշումը վրդովեցուցիչ է, քանի որ Ազգային Ժողովի պատգամաւորները միաձայն հաւանութիւն տուած էին կառավարութեան կողմէ օրինագիծին աւելացուած այդ յօդուածին»,- ըսուած է հաղորդագրութեան մէջ:

«Հաւասարութիւն եւ քաղաքացիութիւն» օրինագիծը, յիշեցնենք, Ազգային Ժողովին քուէարկուած էր Յուլիա 1-ին, որմէ ետք նախարարներէն մէկը նոյնիսկ յայտարարած էր, որ եթէ մինչեւ հիմա միայն հրեաներու Ողջակիզման ժխտումը պատժելի էր, ապա այսուհետեւ պատժելի պիտի ըլլան ֆրանսական կամ միջազգային իրաւասու զոհուած տեսանի կողմէ դա-

տապարտուած բոլոր ցեղասպանութիւններու եւ մարդկութեան դէմ գործուած ոճիւրեղութեան ժխտումը:

Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդը նաեւ նշած է, որ Հայոց ցեղասպանութիւնը, պաշտօնապէս ճանչցուած ըլլալով Ֆրանսայի խորհրդարանի կողմէն 2001 թուականի Յունուար 29-ի օրէնքով, կը համապատասխանէ Մասնաւորական խորհուրդի նկատառումներուն: Վերջինս, մերժելով ընդունիլ «յիշողութեան օրէնքները», 2012 թուականի Փետրուար 28-ին, ընդունած էր միայն օրէնքով ընդունուած ցեղասպանութիւններու ժխտումը պատժելու մասին որոշում:

Ուստի, անհասկանալի համարելով Սենատի ցեղասպանութիւններու ժխտումը պատժելի ճանչցող յօդուածը հանելու մասին որոշումը, Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդը անոր հետին կը տեսնէ թուրքիոյ ձեռքը:

«Սենատը չի կրնար վարկաբեկել ինքնիրեն որոշմամբ մը, որ կը թուի թէ կատարուած է թրքական կառավարութեան ճնշման հետեւանքով»,- յայտարարեց խորհուրդը՝ կոչ ընելով Ծերակոյտին վերանայիլ իր որոշումը:

առողջական խնդիրներու պատճառով հրաժարած էր իր պաշտօնէն: Արթուր Դաւթեան ծնած է 1978-ի Դեկտեմբեր 8-ին (38 տարեկան), Շիրակի մարզի Հոռոմ գիւղին մէջ: Դատախազութեան համակարգին մէջ է 2006-էն, իրաւաբանական գիտութիւններու

թեկնածու է, արդարադատութեան 2-րդ դասի խորհրդական, 2013-2016-ին եղած է Երեւան քաղաքի դատախազ: Կը դասախօսէ Հայաստանի մէջ Ֆրանսական համալսարանին, Երեւանի Պետական Մանկավարժական համալսարանին մէջ:

Հայոց Յեղասպանութեան Նուիրուած Յուշակոթողի Բացում Լոս Անճելըսի Մէջ



Յուշակոթողի բացման արարողութեան ընթացքին

Լոս Անճելըսի Grand Park-ին մէջ Հայոց Յեղասպանութեան նոր յուշարձանի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 17-ին:

Լոս Անճելըսի Գաւառի վերակացու Մայք Անթոնովիչի նախաձեռնութեամբ գետեղուած յուշակոթողի բացման արարողութեան ներկայ եղան տեղական քաղաքական դէմքեր եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Երկու մասի կիսուած, մէկ մասը խորհուրդը եւ միւս մասը հարթ արձանը կը խորհրդանշէ ոչ միայն Հայոց Յեղասպանութիւնը, այլեւ հայ ժողովուրդի գոյատեւումը:

Յուշարձանին վրայ հայ մեծանուն գրող Ուիլիեմ Սարոյեանի հետեւեալ խօսքերն են. «Կեանքիդ ժամերը ապրիր այնպէս, որ քեզի բաժին ինկած ժամերուն չաւելցնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպտով ընդունիս անոր ան-

սահման լոյսն ու խորհուրդը»:

Յուշարձանի ստեղծման աշխատանքներուն մասնակցած լուսանկարիչ Լեւոն Փարեան նշաց, որ իրենք նպատակ ունեցած են ստեղծել գործ մը, որ խօսուն ըլլայ աւելի լայն հասարակութեան համար:

Հինգ թն կշռող յուշարձանի հեղինակը կլանտէյլաբնակ ճարտարպետ Վահագն Թոմասեանն է: Արարատեան դաշտէն բերուած հումքէն պատրաստուած յուշարձանի ճեղքուածքը կը խորհրդանշէ 1915-1918 թուականներու Յեղասպանութիւնը, որ Օսմանեան կայսրութեան մէջ իւրեք 1.5 միլիոն հայերու կեանք:

Հեղինակը՝ Թոմասեանը, պատմած է, որ խորհուրդը հատուածը կը խորհրդանշէ Յեղասպանութեան յաջորդած ժամանակաշրջանը, երբ հայ ժողովուրդը կը պայքարէր եւ կը փորձէր գոյատեւել: Հարթ հատուածը կը խորհրդանշէ ներկան, ապագան եւ նոր սերունդները:

Նշուեցաւ Անկախութեան 25-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

մը, գործ ձեռնահասօրէն վարեց քաղաքիս ծանօթ արուեստագիտուն հիւ՛նունէ Աւետիսեան: Ան շնորհաւորեց Մայր հայրենիքի մեծագոյն տօնը, մաղթելով բարգաւաճ եւ պայծառ ապագայ: Ապա Սահակ Մեսրոպ Հայ Քրիստոնեայ վարժարանի աշակերտներու կատարմամբ երգուեցաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգերը: Անուհետեւ փառատօնի կազմակերպիչ մարմնի անունով ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեան: Ան իր ելոյթին մէջ առանձնապէս շեշտեց՝ «Իշխանութիւնները կու գան ու կ'երթան, բայց հայրենիքն ու իր պետականութիւնն է ամենէն գերիվերը եւ պէտք է փարիսք անոր: Մեր նպատակն է քիչ մը աւելի ազգասիրութիւն մտցնել մեր ժողովուրդին մէջ: Մենք պիտի բարգաւաճինք ու յարատեւենք: Պարծանք հայ ժողովուրդին, բարի վայելում...»:

Յաջորդաբար ողջոյնի խօսքերով հանդէս եկան Գալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի նախկին անդամ՝ Անթոնի Փորթանթի, Արտաշէս Քասախեան, Քոլաբայեան տակնա խորհուրդի անդամ՝ Վարդան Կարապետեան, Կլէնտէյլի Կրթական խորհուրդի անդամներ՝ Արմինէ Ղարապետեան եւ Սքայթ Սվոնքին, Կլէնտէյլի Քաղաքապետուն հի Փաուլա Տուալին, նոյն խորհուրդի ան-

դամ Արա Նաճարեան: Իսկ ԱՄՆի Գոնկրէսի անդամ՝ Ատամ Շիֆի ներկայացուցիչ՝ Մարի Յովակիմեան կարդաց Ատամ Շիֆի կողմէ հայ ժողովուրդին ուղղուած գնահատանքի եւ շնորհաւորական ուղերձ մը: Լոս Անճելոս քաղաքի վերակացուներու խորհուրդի նախագահ՝ Մայք Անթոնովիչի ներկայացուցիչ Ռիթա Հաճի Մանուկեան հայտնեց մեծ տօնին առիթով Մ. Անթոնովիչի բարեմաղթութիւնները փոխանցեց ներկայ հասարակութեան եւ այս առիթով պաշտօնական հուշակագիրներ փոխանցեց Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող Նոր Սերունդ Մշակութային Միութեան ու Հայ Ամերիկեան խորհուրդի ներկայացուցիչներուն: Նմանապէս իրենց ողջոյնի եւ շնորհաւորական ելոյթներով հանդէս եկան իրանահայ Միութեան ատենապետ՝ Թոմիկ Ալբասանեան եւ A.A.B.C. հայկական հեռուստաժամի տնօրէն՝ Վրէժ Աղախանեան:

Խանդավառ մթնոլորտն իր գագաթնակէտին հասաւ գեղարուեստական ճոխ յայտագրի գործադրութեամբ: Յաջորդաբար ելոյթներով հանդէս եկան Սահակ Մեսրոպ վարժարանի երգչախումբը, Չուիթակահար Մերուսիան Մարգարեանը, տուտուկահար Ռուբէն Յարութիւնեանը, երաժիշտ («Քիպորտ») Աշոտ Մարգարեանը, Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Նարեկ» պարախումբերը եւ «Լիլի» պարի համոյթը: Ուշագրաւ

ՄԴՀԿ «Նագարբէկ» Երիտասարդական Միութեան Բողոքը Փարիզի Մէջ Բացուած «Ատրպէյճանի Գիւղ» Ցուցահանդէսին Դէմ

Սեպտեմբեր 19-ին Փարիզի մէջ գործող ՄԴՀԿ «Նագարբէկ» երիտասարդական միութեան հրահանգով բողոքի ցուցումը տեղի ունեցած է «Ատրպէյճանի գիւղ» անուան տակ բացուած ցուցահանդէսի վայրը: Ատրպէյճանի եւ Ալիեի դէմ



ուղղուած պատասխաններով ու բարձրախօսով հնչող բողոքի խօսքերով, երիտասարդներ հաւաքուած էին ոստիկանութեան կողմէ հաստատուած հեռաւորութեան վրայ:

«Անցորդները կը հարցնէին թէ ո՞վ ենք եւ ինչու՞ է համար հաւաքուած ենք: Ոստիկաններուն թիւը սկիզբը երկուք էր, սակայն հասաւ 30-ի: Անոնք մեզ զգուշացուցած էին, որ 200 մեթրէն աւելի չմօտենանք ցուցադրութեան վայր, կը սպառնային ձերբակալել մեզ: Ազդերիկան ապահովական վարձուած խումբի անդամները սկսան աւելի մօտենալ եւ ձեռնուր փորձեր ընել, բայց ոստիկանները արգիլեցին: Յոյսը նախատեսուած էր այսօրը, որովհետեւ Ալիեի կինը՝ Մեհրիպան Ալիե անձամբ բացումը պիտի կատարէր «Գիւղ»-ին», «Արեւելք» կայքէջին յայտնած է ՄԴՀԿ Փարիզի «Նագարբէկ երիտա-

սարդական միութեան» անդամ մը: «Նագարբէկ» երիտասարդական միութիւնը Ներերքին, Գործոց Նախարարութեանն արտօնութիւն ստացած էր ցուցը կայացնելու համար, բայց միայն 700 մ. հեռաւորութեան վրայ: «Նագարբէկ» հաղորդագրութեամբ մը տեղեկացուցած էր ամբողջ գաղութը, ինչպէս նաեւ հեռախօսային, ցանցային եւ անհատական կապեր հաստատելով:

Վերջին տարիներուն, «Հայտար Ալիե» հիմնարկութեան նիւթական միջոցներով, Փարիզի մէջ քարոզական իրարայջորդ ձեռնարկներ կազմակերպող Ատրպէյճան, այս անգամ ալ ինքզինք կը ցուցադրէ «Ատրպէյճանի գիւղ» անունով, մայրաքաղաքին 7-րդ թաղամասի՝ Ժոֆրը հրապարակին վրայ, ամբողջ շաբաթ մը՝ Սեպտեմբեր 17-էն 25:

Հայաստանի Անկախութեան 25-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

եան լրագրողներուն յայտարարեց, թէ ՀՀ անկախութեան 25-րդ տարեդարձին նուիրուած գորահանդէսին ցուցադրուած ողջ սպառազինումը ՀՀ Ձինուած ուժերունն է:

«Հայաստանի Հանրապետութեան անկախութեան պատմութեան ընթացքին եղած գորահանդէսներու ժամանակ ցուցադրուած են միայն ու միայն Հայկական Ձինուած ուժերու կազմին մէջ եղած սպառազինութիւնները», -ըսաւ ան:

Նշենք, որ հրապարակումներ եղած էին, ըստ որոնց՝ ցուցադրուող զէնքերու մէկ մասը ՀՀ Ձինուած ուժերունը չէ, եւ անոնք ցուցադրութեան համար տրամադրած է ուսասական կողմը:

Նախագահ Սերժ Սարգսեան, երկու հարապետները եւ ԼՂ նախագահ Բակո Սահակեան անկախութեան տօնի 25-րդ տարեդարձի առթիւ այցելեցին «Եռաբլուր»՝ յարգանքի տուրք մատուցելու նահատակուած հայորդիներու յիշատակին:

Հայաստանի անկախութեան 25-ամեակին նուիրուած գորահանդէսին Ռուսիոյ եւ մի քանի այլ երկիրներու դրօշներու ներկայու-

թեան դժգոհ խումբ մը քաղաքացիներ, հաւաքուելով Ազատութեան հրապարակը՝ «Եռաբլուր» կատարեցին:

Վերջերս կայանքին ազատ արձակուած ընդդիմադիր՝ Դաւիթ Սանասարեան, Ազատութեան հրապարակին մէջ ելոյթ ունեցելով պնդեց, որ Հայաստանը դեռ լիովին անկախ չէ:

«Անկախութեան ներկայ վիճակը պէտք է փոխենք, այս լիարժէք անկախութիւնն է, այս կիսանկախութիւնն է: Հայաստանի մէջ պէտք է ծառայեն բացառապէս Հայաստանի Հանրապետութեան գինուորները: Հայաստանի հրապարակին մէջ, ինչպէս այսօր, պէտք է ծածանին ուսական, այլ երկրի դրօշներ: Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարը պէտք է ուսներին խօսի անկախութեան օրը, ինչպէս ըրաւ այսօր», - յայտարարեց Սանասարեան:

Մաւաքին կը մասնակցէր նաեւ «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ Ալեք Ենիգոմշեանը: Անոր պնդմամբ, հեզնական է, երբ ինքնիշխանութիւնը մաս առ մաս գիւղերը անկախութեան շքերթ կը կատարեն:

Աւարտին փառատօնի կազմակերպիչները, Հայաստանի անկախութեան 25 ամեակին նուիրուած յիշատակի արձանիկներ նուիրեցին սոյն միջոցառումին մասնակից արուեստագէտներուն, առ ի գնահատանք իրենց օգտաշատ ներդրումին ու ծառայութեան:

Ուշ երեկոյեան ներկաները զբօսայգիէն հեռացան բարձր տրամադրութեամբ եւ հայրենական գեղեցիկ ու յիշատակելի օրուան մը լաւագոյն տպաւորութիւններով:

Ելոյթներ ունեցան նաեւ մեներգիչներ Յարութ Յակոբեան, Ալֆրէտ Գալստեան, Արթուր «MR. X», Էլլա Թարունց, Վարդան Թայմազեան, Արման Ղազարեան, Արա Շահպազեան, Սուրիկ Մահաջեան, Աննօ Մկրտչեան եւ Աշոտ Սարգիսեան: Տօնական բարձր տրամադրութեան տակ պարի հրապարակ խումբեցին նաեւ ներկայ հասարակութեան շատեր, ստեղծելով իսկական փառատօնի միջավայր, կամ գիւղական մեծ հարսանիքի երեւոյթ...:

Մայիս 28, Նոյեմբեր 29, Սեպտեմբեր 21 եւ Պետական Ստածողութիւն

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Հայաստանի անկախութեան 25-ամեակին առթիւ, այս յօդուածով կը նպատակադրենք ցոյց տալ անձնասէր-հատուածական մտածողութեան վնասները եւ ազգային-պետական մտածողութեան օգուտները մեր ժողովուրդի իրավիճակի զարգացման գործընթացին վրայ, Հայաստանի թէ սփիւռքի տարածքին: Մեր յօդուածը կարելի եղածին չափ սեղմ սահմաններու մէջ պահելու համար, հիմնուած ենք մեր նորագոյն պատմութեան մէջ մեր պետականութեան կերտման հետ կապուած երեք գլխաւոր թուականներու վրայ, որոնք թարմ են եւ կ'առնչուին մեր կեանքին հետ: Բայց կ'արժէ միայն մէկ ցայտուն օրինակ մը բերել մեր հեռավոր անցեալի պատմութիւնէն: Արշակունեաց թագաւորութեան վերջին ութ թագաւորներէն վեցն զոհ գացին դաւադրութեանց, պարսկասէր եւ բիւզանդասէր հայ նախարարներու հատուածական շահերու հետապնդման պատճառաւ: Արդիւնքը՝ հայ պետականութեան կորուստն էր, որուն ի վերջոյ հետեւեցաւ այդ նոյն նախարարական տուններու կորուստը: Հետեւաբար, վերեւ նշուած թուականներուն առողջ ընկալումը յոյժ կարեւոր նշանակութիւն ունի ներկայի հայ պետական մտածողութեան եւ հուսկ՝ հայկական պետականութեան կերտման եւ ազգային գիտակցութեան ամրապնդման գործընթացին վրայ: Դժբախտաբար, փոխանակ այս թուականները դիտարկելու որպէս իրարու շողկապուած եւ գիրար լրացնող երեւոյթներ, ընդհակառակը, պատահապաշտ առաջնորդներու կողմէ ծառայեցուած են ներքին պառակտումներ եւ թշնամական զգացումներ հրահրելու համար, որու պատճառաւ ունինք այսօրուան տխուր իրավիճակը:

1918 Մայիս 28

Սկսինք 1918 թուի Մայիս 28-ի օրինակով: 1045 թուին Բագրատունեաց թագաւորութեան անկումէն եւ 1375-ին Կիլիկեան թագաւորութեան անկումէն ետք, առիթը ներկայացաւ մեզի վերահիմնելու մեր պետականութիւնը եւ դառնալու ինքիշխան: Մոռնանք թէ ինչպիսի՜ լորձնաշուրթն բառերով մեր ժամանակակիցները կը բնութագրեն անոր ծնունդը եւ խօսքը տանք այդ օրուան առաջնորդներուն:

Ըստ Հայաստանի Ա. Հանրապետութեան առաջին ֆաշազնունիի, «Պէտք էր արդեօք անկախութիւն յայտարարէինք, ի վիճակի՞ էինք արդեօք սեփական պետութիւն կազմելու ու ապա պահելու գալն... Պարապ հարցեր են սրանք: 1918 թ. Մայիս ամսի վերջի օրերին այդպիսի հարցեր չէր կարելի դնել: Ընտրութիւններ անելու տեղ չէր մնացել: Պատմութիւնը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջեւ. պէտք է յանդգնութիւն ունենայինք անցնել վրայից, եթէ չէինք ուզում խորտակուել: Պէտք է տէր դառնայինք մեր հայրենիքին, ապա թէ ոչ կը կորցնէինք այն, գուցէ անդառնալիօրէն: Եթէ տատանուէինք, եթէ ուշացնէինք մեր յայտարարութիւնը, Հայաստան կը մնար *res nullius* (ոչ ոքի պատկանող իր) ու իբրեւ այդպիսին, բաժին կը դառնար հարեւաններին. թուրքերին, վրացիներին, ազրպէյճանցիներին: Մայիսի 28-ին, ուշ գիշերով, Ազգային կենդրոնական խորհուրդը վճռեց յայտարարել Հայաստան անկախ հանրապետութիւն եւ իրան՝ գերագոյն իշխանութիւն Հանրապետութեան: Այդպիսի լիազօրութիւն խորհուրդը չէր ստացած Ազգային Համագումարից, բայց կանգ չառաւ ձեւական արգելքի առջեւ ու յետագայում ոչ ոք մտքով չանցկացրեց մեղադրել նրան. այնքան պարզ էր ամէնքի համար, որ ուրիշ ելք չկար:»



Ըստ ՀՀ երկրորդ վարչապետ՝ Ալեքսանդր Խատիսեանի, «Մեզ իրապէս ուրիշ ելք չէր մնար, բայց եթէ մեր կողմէ եւս յայտարարել Հայաստանի անկախութիւնը: Բախտորոշ դեր կատարեց այն վերջնագիրը, զոր մենք ստացանք նոյն գիշերին իսկ (Մայիս 25, 1918. ՅՏԴ) թուրքերու կողմէ: Երեք օր ժամանակ կու տար վերջնագիրը, ընդունելու այն դաժան պայմանները, զորս թրքական պատուիրակութիւնը ներկայացուցած էր



Պատմի խորհրդաժողովի առաջին նիստին իսկ (Մայիս 11, 1918. ՅՏԴ), փակ ծրարով:»
Ըստ ՀՀ չորրորդ եւ վերջին վարչապետ՝ Սիմոն Վրացեանի, «Ցնծութեան աղաղակներով ու ծափերով չընդունուեց հանրապետութեան ծնունդը: Ընդհակառակը, շատերի համար նախատուած էր անժամանակ ծնունդ: Հիւանդ երեխայ աշխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգաւոր՝ շշմշալով. «Դու իմ եւ ուրախութիւնն ես, դու՛ դժբախտութիւնը իմ ...» Այո՛, անցունքի եւ տառապանքի ծովից ծնուեց Հայաստանի անկախութիւնը: Ոմանք չէին հաւատում նրան. անկախութիւն ու հանրապետութիւն բառերը դնում էին չակերտի մէջ: Եւ այդպէս վարուելու հիմքերը շատ էին գորաւոր. Իրօք որ, գարհուրելի էին պայմանները, եւ անկախութիւնը այդ պայմաններում թուով էր հեզանք:»

Ինչպէս կը տեսնենք, շատ դժուարին պայմաններու մէջ ծնունդ առաւ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը եւ կը սպասուէր, որ հարիւրամեակներով օտարի իշխանութեան տակ տառապած հայ ժողովուրդը լաւագոյն պէտք է գիտակցէր գայն պահելու եւ ամրացնելու կարեւորութեան: Դժբախտաբար այդպէս չեղաւ: Ի՞նչու: Որովհետեւ չունեցանք բարձր տեսլականի տէր առաջնորդներ, որոնք ժամանակի թոհոփոհին ընդմէջէն ճիշտ կողմնորոշուելու կարողութիւնը ունենային եւ չունեցանք ազգասէր առաջնորդներ, որոնք հայրենիքի շահերը աւելի գերադասէին իրենց անձնական եւ հատուածական շահերէն: Խօսքը տանք Քաջազնունիին. «Անհրաքելի ճշմարտութիւն է, որ Հայաստանի դրութիւնը եղել է բացառիկօրէն ծանր ու մեր աշխատանքի պայմանները՝ բացառիկօրէն անբարեյաջող: Բայց անհրաքելի է

եւ այն - անհրաքելի է գոնէ ինձ համար - որ սրա վրայ աւելացել է նաեւ մեր սեփական անկարողութիւնը, պետական գործեր վարելու անձեռնհասութիւնը: Եթէ ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, ապա ուրեմն մենք միանգամայն անպէտք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հէնց այդ նախատեսելու ընդունակութիւնն է, որ չենք ունեցել բնաւ... Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւնը քննարկելով պետական կեանքի մէջ: Պետական մարդիկ չէինք մենք... Պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձեւ էր առանց պարունակութեան: Պետական հարցերը քննութեան էին առնուում ու լուծուում դուրսից, դաշնակցական ֆրակցիայի սենեակում, ու ապա յայտարարուում պարլամենտի ամբիոնից: Իրօք չկար եւ պարլամենտական ֆրակցիա, որովհետեւ սա դրուած էր Դաշնակցութեան բիւրօյի խիստ հակողութեան տակ ու պարտաւոր էր կատարելու նրա հրամանները: Չկար եւ կառավարութիւն. սա եւս ենթարկուած էր բիւրօյին, բիւրօյի մի տեսակ գործադիր մարմինն էր պետութեան մէջ: Բօլշեւիկեան սխտեմ էր սա: Բայց այն, որ բօլշեւիկները անում են հետեւողականօրէն ու բացառապէս, մենք աշխատում էինք քօղարկել դեմոկրատական ձեւերի տակ:»

Վերեւ նշուած պայմաններու տակ, հազիւ 2,5 տարուան կեանք ունեցաւ մեր առաջին հանրապետութիւնը:

1920 Նոյեմբեր 29

Այս պարագային ալ մոռնանք, թէ տասնամեակներով ինչպիսի՜ ածականներու արժանացաւ Հայաստանի Բ. Հանրապետութիւնը եւ ինչպէ՞ս կ'ընկալուի ան նոյնիսկ այս օրերուն: Կան մարդիկ, որոնք կը շեշտեն թէ նոյնիսկ ճիշտ չէ Հայաստանի Բ. Հանրապետութիւն բնութագրուած տալ խորհրդային Հայաստանին, որովհետեւ անկախ պետականութիւն չէր ան: Իրաւականօրէն ճիշտ են անոնք, բայց հարցին պէտք է նայիլ աւելի հիմնական տեսանկիւնէ մը, որ լաւագոյն նկարագրած է 20րդ դարու մեր մեծագոյն պետական մտածողութեան այրերէն՝ Յովհաննէս Քաջազնունիին, 1923-ին ՀՅԴ-ի արտասահմանեան մարմիններու խորհրդաժողովին ներկայացուցած իր գեկուցագրին մէջ:

Շար.ը էջ 17

Bedros S. Maronian 818/500-9585		Siamanto B. Maronian 818/269-0909	
SERVING THE COMMUNITY SINCE 1975 More locations and more ways to service your insurance and financial needs			
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101	
<ul style="list-style-type: none"> Life Insurance Health Insurance Group & Individual Long Term Care Disability 	<ul style="list-style-type: none"> Estate Planning Will & Living Trust Full Annual Review Mortgage Protection College Planning 	<ul style="list-style-type: none"> Workman's Compensation Employee Benefits Annuity IRA 401K & 403B 	
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits		A.B.A. INSURANCE SERVICES Insurance coverage can help you financially! Ապահովագրութիւնը Աճիրաճեղալ է Coverage & Protection should be on the top of your priority list.	



ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ՈՂՁՈ՞ՅՆ ԱՐԺԱՆԱԻՈՐԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ 25 ՏԱՐԵԿԱՆ Է



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

1991 թվականի Սեպտեմբեր ամսուն մէջ աշխարհասփիւռ հայութիւնը մեծ ցնծութեամբ ողջունեց ծնունդը Հայաստանի եւ Արցախի անկախ հանրապետութիւններուն: Ահաւոր երկրաշարժէն (1988) ետք, հրաշքի համագործակալութեամբ եւ խիզախութեամբ հայրենի մեր ժողովուրդը դրաւ հիմերը ազգային պետականութեան Հայաստանի ու Արցախի մէջ: Ու երբ հերոսածին մեր ժողովուրդի գաւազները ջախջախիչ հարուածներով ազատագրութեան յաղթական արշաւ կը մղէին Արցախի դաշտերուն եւ լեռներուն վրայ, գտնուեցան մարդիկ, որոնք թալանի ենթարկեցին սովետական կարգերու տակ շինուած ու կերտուած գործարանները մեր երկրին: Ընկերային արդարութիւնը դարձաւ քուրճիկ կտոր աչքախիթ թալանողներու ոտքին տակ, եւ ազատ ու անկախ Հայաստանի միջնորդութիւնը մէջ ազատութիւն շնորհուեցաւ նիւթասէր եւ նիւթապաշտ դասակարգի մը, որ կարմիրին վրայ կապոյտ ու դեղին հագած քաղցր դէպի աղբիւրը անարդար շահի եւ անպարկեշտ կենցաղի ու ապրելակերպի: Պետական այս ազատ ու անկախ քսանհինգամեայ մեր երթին առթիւ, ողջո՞յն հայ ժողովուրդին, որուն առաջին շարքին կը կանգնին բոլոր անոնք՝ որոնք արժանի չեն այս սքանչելի ժողովուրդի գոհաբերութեան ոգիին եւ հայրենասիրութեան մակարդակին:

Ողջո՞յն մեր կտրիճ ու անվեհեր սպաններուն, զինուորներուն եւ կամաւորներուն, որոնք կու գան մեր ժողովուրդի ամենահամեստ ընտանիքներու շարքերէն եւ կը պահեն ու կը պաշտպանեն Հայաստանն ու Արցախը ընդհամարաբար թշնամիներու: Անոնք ամօթի սիւնին կը գամեն բոլոր անոնք, որոնք շահախնդիր իրենց արարքներով դարձած են Հայաստանի եւ Արցախի զօրացման ու բարգաւաճման դէմ ներքին թշնամիներ:

Ողջո՞յն մեր երգի, նուագի ու պարի արուեստագէտներուն, որոնք «գոհարափայլ» եւ այլ ելոյթներով աշխարհի ամէն կողմ կը տարածեն մեր ազգային արուեստը եւ բարձրորակ ճաշակով կը ներկայացնեն հայ բազմադարեայ մշակոյթը:

Ողջո՞յն հայ գիւղացիին, որուն քրտինքով ու արիւնով կը

մշակուի եւ կ'ոռոգուի հայ հողը եւ իր աղքատ օճախին մէջ կը ծնին մեր ազգին հերոսները: Ողջո՞յն մեր գիտնականներուն, արհեստի եւ արուեստի հնարամիտ տաղանդներուն ու հանճարներուն, որոնք դժուար պայմաններու տակ աշխատելով՝ կը շարունակեն հնարել ու ստեղծել, տալով Հայաստանին զարգացած երկիր կոչուելու պատիւը:

Անցեալ դարու կէսէն ետք մեծցած ու հասակ առած մեր սերունդը կը ներշնչուէր հայ հռչակաւոր մարդոցմով, ինչպիսիք էին Ալիխանեան եղբայրները, Միկոյեան եղբայրները, Մարշալներ՝ Բաղրամեանն ու Բաբաջանեանը, Վիքթոր Համբարձումեանն ու Արամ Խաչատրեանը, աշխարհի ախոյեաններ՝ Ալպէր Ազարեանն ու Տիգրան Պետրոսեանը: Գիտնականներ, արուեստագէտներ եւ աշխարհի ախոյեաններ արտադրած մեր երկիրը արդեօք ինչո՞վ հպարտ կրնայ ըլլալ այսօր:

Ընթերցողին կը մնայ թուել զինք հպարտ զգացնող հռչակաւոր հայու մը անունը կամ անոր հետ առընչուող յաջողութիւնը (անշուշտ չյիշելով քանի մը հայ միլիոնատէրերու անունները): Մեր զոյգ հանրապետութիւններուն քսանհինգամեակը սակայն, հակառակ ցաւալի նկատուող վերոյիշեալ ժխտականութեան, մեզ կը դնէ ազգային երազային վիճակի մը մէջ, ուր կը յուսանք որ անհետանան այն բոլոր խիստ ու դժուար պայմանները, որոնք պատրուակ կը ծառայեն արդարացնելու իշխանատէր դասակարգի ձախողութիւնները: Վիճակ մը՝ որ մեր քաջարի զինուորի ազգասիրութեան եւ հայրենասիրութեան ուսերուն չի բեռցներ պատասխանատուութիւնը հայրենի սահմանները պաշտպանելու ի գին անտեղի գոհողութեան, այլ վիճակ մը՝ որ ազգովին կը ծրագրուի եւ պետականօրէն կը գործադրուի, որպէսզի հայ զինուորին թիկունքը զօրացուի եւ արդիական գէնքերով ան օժտուի: Վիճակ մը՝ որ հայ մայրեր սեւ չհագնին եւ իրենց գաւազները կուրծի դաշտէն հերոս դարձած՝ գրկաբաց ընդունին:

Մեր զոյգ հանրապետութիւններու անկախութեան պանծալի քսանհինգամեակին առթիւ՝ Ողջո՞ՅՆ ԱՐԺԱՆԱԻՈՐԱՅ, ողջո՞յն անոնց, որոնք անծանօթ զինուորի դերին մէջ հայրենիք կը պահեն ու հայրենիք կը կերտեն:

տան», - այս չիճեցման ընդդիմադիր պատգամաւորը արձագանքեց. «Գիտէ՞ք, սիրուն բառեր բոլորը կրնան լսել, ճշգրիտ ծրագրերը պետք է ըսել՝ ճշգրիտ: Յովիկ Աբրահամեանը երկու սիրուն բան ըսաւ, բայց մոռցաւ երկու օր վերջ,

Շար.ը էջ 19

ԱՄՆ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ՝ ԺԱՄԱՆԱԿՆ Է ՊԱՏԺԱՄԻՉՈՑՆԵՐ ՍԱՅՄԱՆԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԿԱՏՄԱՄ

«Ժամանակն է, որ պաշտօնական Ուաշինգթոնը պատժամիջոցներ սահմանէ Ատրպեյճանի նկատմամբ՝ մարդու իրաւունքներու շարունակական ոտնահարումներու համար»,- երէկ միաձայն պնդեցին Միացեալ Նահանգներու Գոնկրե-սին մէջ կազմակերպուած քննարկման մասնակիցները:

Աշխարհի տարբեր երկիրներու մէջ մարդու իրաւունքներու պաշտպանութեան հետեւող Լանթոսի յանձնաժողովը կապիտոլի մէջ հրաւիրեց «Ազատութիւն» ռատիոկայանի հետաքննող լրագրող, վերջերս կալանքէ ազատած իսրայէլացի Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Ռիչարդ Կոլարիչին եւ «Ատրպեյճանի ժողովրդական ճակատ» կուսակցութեան ղեկավար Ալի Քերիմլիի որդուն:

«Կաշառակեր պաշտօնեաներու, դատախազներու ու դատաւորներու հանդէպ թիրախային պատժամիջոցները կրնան շատ արդիւնաւէտ գործիք ըլլալ՝ Ատրպեյ-ճանի իշխանութիւններուն յարձակողական բռնաճնշումներէն ետ պահելու համար»,- յայտարարեց լրագրող իսրայէլացի իսթաբլիշման իսթաբլիշման ղեկավար Միացեալ Նահանգներու միջոցաւ լրագրող չէ, նաֆթատոլարները դուրս կու գան երկրի սահմաններէն՝ հասնելով ԱՄՆ Գոնկրեա, Եւրոխորհուրդ ու Եւրոխորհրդարան: Անհրաժեշտ է կանգնեցնել այդ մեքենան՝ յատակ ուղերձներով ու սահմանափակումներով: Ատրպեյճանի մէջ երկու շաբաթէ տեղի ունենալիք սահմանադրական հանրաքուէն առաջ կազմակերպուած քննարկման, ընդդիմադիր «Ժողովրդական ճակատ» կուսակցութեան ղեկավար Ալի Քերիմլիի որդին՝ Թուրքիայի պնդեց, որ իշխում Ալիի աջ փոփոխութիւններով կ'ուզէ ամրապնդել իր միահեծան իշխանութիւնը՝ յետագային աթուր ժառանգելով որդուն՝ կրտսեր Հայտարին: «Անհ-

Շար.ը էջ 19

Յիշեցնենք, որ Չորեքշաբթի օր, Հայաստանի Երրորդ Հանրապետութեան 14-րդ վարչապետը, կրկնելով իր նախորդի՝ Յովիկ Աբրահամեանի խօսքերը, նոյնպէս յայտարարեց, որ «կախարդական փայտիկ չունի», եւ սպասելիքներ չկան, որ չափազանց ծանր վիճակի մէջ յայտնուած տնտեսութիւնը շատ արագ փոփոխութեան ենթարկուի:

Ազգային ժողովի ՀԱԿ խմբակցութեան քարտուղար՝ Արամ Մանուկեան, հարց բարձրացուց, թէ ինչ առաքելութեամբ Հայաստան եկած է Կարեն Կարապետեան:

Նախագահ Սերժ Սարգսեանի բաւական լաւատես յայտարարութեան, թէ՛ Կարեն Կարապետեան կը դառնայ Հայաստանի փոփոխութիւններու տիպարը, ինչպէս նաեւ՝ նորանշանակ վարչապետի ոչ այնքան լաւատես յայտարարութիւնները Մանուկեան գնահատեց, ըսելով. «Հանրապետական կուսակցութեան անդամներու այդ գովազդի շքերթը դրէք իրար կողքի, Սերժ Սարգսեանի ներկայացումը դրէք իրար կողքի, ըստ որուն՝ կը ստանանք, որ Հայաստանը անմիջապէս տիեզերք կը թռչի, ինչ վերկազմումներ պիտի կայանան, վասիւկի կը կառուցենք, Սինկափուր կը կառուցենք, նոր ժամանակաշրջան կը սկսի Հայաստանի մէջ, պաղ ջուր լեցուցաւ այդ մարդկանց ըսածին վրայ»:

«Չկայ առաջադրանք, չկայ ծրագիր ու այստեղ է, որ երեւան կու գայ ըսուած խօսքերուն եւ առկայ իրադրութեան միջեւ առկայ անհամապատասխան ըլլալը», - նշեց ընդդիմադիր պատգամաւորը:

Ան աւելցուց. «Մենք գահավիժող տնտեսութիւն ունինք, խայտառակ մակրոտնտեսական տուեալներ: Եթէ ես այդքանը գիտեմ, ես վստահ եմ՝ իրեն արդէն ներկայացուցած են աւելի շատ, եւ կրկին նոյն հարցը կը մնայ ոչ թի մէջ՝ այդ պարագային ինչու՞ եկած է, ի՞նչ առաքելութեամբ, ի՞նչ յանձնարարութեամբ»:

Սերժ Սարգսեանը կը նշէ. «Կարծրատիպեր պէտք է կոտրէ, տնտեսական, քաղաքական ազատութիւններ պէտք է բերէ Հայաս-

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.

«Քաջ Նապար» հանդէսն ու հեռուստաժամը ներկայացնում է
17-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ
 Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՊԻ ԲԻՄՆԱԳՐԱՄԻ, ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՊԱՍ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՍԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ

Կիրակի, Սեպտեմբեր 25, 2016, ժամը 3-12:00
ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
 and "KACH NAZAR" Magazine and TV Show
 Presents

17th ANNIVERSARY TELETHON
ON SUNDAY, SEPTEMBER 25, 2016
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES
Մեր Ապագան, մեր Մերունդն է:

OBLIGED TO HELP ARMENIA'S NEXT GENERATION
 Please mail your check to (A.A.O.C. FUND,) P.O.BOX 250038, GLENDALE, CA 91225 or to 626 West Colorado Street, Glendale, CA 91204 USA Tel: 818-246-2070
 Tel: 818-246-0125 • 818-239-6880 • 818-292-9619
 E-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com
 Non-Profit Organization. a Tax Exempt 501 (c) 3 Charity.

ՅՈՒՇԵՐ ՍԻՐԱՆ ԶԱՐԻՖԵԱՆ (ՍԵԶԱ) ԵՒ Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՇԵՆԵԱՆ

1955ին, տարի մը պաշտօնեայ եղայ Ա. Ծառուկեանի «Նայիրի» շաբաթաթերթին մէջ, զանազան գործեր, նոր տողաշար վարպետին շարածներու առաջին փորձերու սրբագրութեան, թերթը տանիլ գրավաճառներուն եւ ծախելու համար, նոր թերթեր տանիլ եւ չծախուածները առնել, եւ գանձել ծախուածները, տպուելիք թուղթեր գնել Պէյրութի շուկայէն եւ զանազան գնումներ: Բաւական ատեն ծանօթանալէն ետք վարպետիս օր մը հարց տուի:

- Պրն. Ծառուկեան, ինչո՞ւ ոտքդ կը կաղայ...

- Դուն Սեզային կը ճանչնա՞ս, եթէ այո, անոր հարցուր:

1961ին ամուսնացայ Արշօ խարտալեանի հետ եւ Սուրիա փողոցի Պարսումեանի մեծ շէնքին ուղիքին մէջ բնակեցայ: Հոն ճիշդ յարկի բնակող Սեզային արդէն ծանօթ էի Սիմոն Սիմոնեանի Սեւան տպարանի «Սփիւռք» շաբաթաթերթին խմբագրատունը:

Սեզան ազնուական եւ սրամիտ հայուհի մըն էր եւ մեր բնակարանը եկաւ աղուոր ծաղկեփունջով: Առաջին հարցումը եղաւ.

- Նոր ամուսնացած էք, Արշօ, դուն լաւ սուրճ մը եփէ:

- Սեզան, քեզի փառաւոր սուրճ մը եփեմ...

Խմելէն ետք, Սեզան ըսաւ, «ապրիս, փառաւոր եփեր ես, էհ շատ համով է, ես ձախողած եմ, քեզի պէս սուրճ եփելէ, ուրեմն օրական մէկ երկու անգամ կու գամ խմելու:

1963ին ունեցանք Սեւակը եւ 1967ին Տաթևը: Սեզան նուէրներով ողողեց: Երեկոյ մը փառաւոր սուրճ մը խմելէ ետք Սեզային ըսի, կրնամ մտերմիկ հարցում ընել Անդրանիկ Ծառուկեանի թօփալի մասին:

Սեզան խնդալով ըսաւ, այս խենթ Անդրանիկին պատմութիւնը կ'ուզես իմանալ, ամենայն սիրով: Ներկայ էր նաեւ Յովհաննէս Երկանեանը, որ մեր տունը կ'այցելէր:

- Այս Անդրանիկը օր մը եկաւ

եւ ըսաւ, Սեզա, կ'ուզեմ ամուսնանալ անպայման...:

- Անդրանիկ դուն թափրան թարագանին մէկն ես, տպարանի մարդիկը եւ բարեկամներդ կ'ըսեն, որ դրամ չունիս, քեզի հետ չեմ ամուսնանար, ես պիտի ամուսնանամ իմ բարեկամիս Տօքթ. Ներսէս Քիւփէլեանի հետ, որ ԱՅ Փի Սի քարիւղի ընկերութեանց պաշտօնեայ էր Պաղտատի մէջ:

- Սեզան եթէ ինձի հետ չամուսնանաս, անձնասպան պիտի ըլլամ, պոռաց Ծառուկեանը...

- Սեզան ըսաւ. Անդրանիկ դուն լաւ բանաստեղծ ես, պէտք չունիս ամուսնանալու համար անձնասպան ըլլալ: Դուն ուրիշ հայուհի մը հետ ամուսնանաս լաւ կ'ըլլայ... գրականութեան համար...:

Ծառուկեանը պատասխանեց.

-«Խելքդ գլուխդ հաւաքէ ես ալ բացառիկ գեղեցիկ մըն ալ չեմ»:

- Ծառուկեանը պատասխանեց. «դուն ազնուականապէս գեղեցիկ ես, կամ քեզի հետ կ'ամուսնանամ եւ կամ անձնասպան կ'ըլլամ...»:

- Տօքթ. Քիւփէլեանը ինձի լաւ դրամ պիտի տայ եւ «Երիտասարդ Հայուհի» ամսաթերթին ծախսերը պիտի հոգայ: Դուն Անդրանիկ թափրան թարագան ես... մոռցիր ինձի...:

Սեզային եւ Տօքթ. Քիւփէլեանի ամուսնանալու օրը Ա. Ծառուկեան անձնասպանութիւն փորձեց:

Սեզան ըսաւ. «չէի կարծեր, որ Անդրանիկին սիրտը զիստին մէջ եղեր չէ, քէրամազ ատրճանակովը: Վայ Անդրանիկ...»:

Սեզան «Երիտասարդ Հայուհի» ամսաթերթը հրատարակեց մեծ յաջողութեամբ տպարան Տէր Սահակեանի մօտ Պէյրութ: «Հայ Երիտասարդ Հայուհի» իր շուրջ հաւաքեց, որոնց մէջ նշանաւոր եղաւ Սէսիլ Քէշիշեանը եւ ուրիշներ: Սեզան եւ տօքթորը միակ գաւազը ունեցան՝ Վահագն անունով, որ յետագային ուսուցիչ եղաւ Պէյրութի «Հայկազեան Գոլէճին» մէջ առաւելաբար գերմաներէնի մէջ, զոր ուսած էր Գերմանիոյ մէջ:

ՄԵՂՐԻԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՄՆ ԿԸ ՅԱՏԿԱՑՆԷ \$450.000



ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Մ. Միլս Կրտսերը եւ ՀՀ մշակուցի նախարարի պաշտօնակատար Յամիկ Պողոսեանը Սեպտեմբեր 16-ին ստորագրած են յուշագիր, որով պէտք է իրականացուի Մեղրիի Սուրբ Սարգիս միջնադարեան եկեղեցու պահպանութիւնը, ինչպէս նաեւ իւրաքանչեւ եւ բացառիկ որմանկարներու վերականգնման աշխատանքները:

«Մեր կողմէ տրամադրուող գումարները այն արժէքներու պահպանման համար են, որոնք անգին ժառանգութիւն են ոչ միայն տուեալ երկրի, այլեւ՝ ամբողջ մարդկութեան համար: Պահպանութեան, վերականգնման աշխատանքներու

իրականացման համար ԱՄՆ պետական քարտուղարութիւնը կը յատկացնէ \$450.000», -նշած է դեսպան Միլսը:

Մեղրիի Սուրբ Սարգիս եկեղեցին 17-րդ դարու ինքնատիպ կառուց է՝ Միջին Արեւելքի ու կովկասի մէջ որմանկարներու եզակիութեամբ առանձնացող:

Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատունէն կը յայտնեն, որ ֆինանսաւորումը կ'իրականացուի ԱՄՆ դեսպանի մշակութային արժէքներու պահպանութեան հիմնադրամի կողմէ (AFCP):

Սա 2005-էն սկսեալ 10-րդ եւ ամենամեծ դրամաշնորհային ծրագիրն է:

75 ՈՒՒՏԱՒՈՐՆԵՐ ԿԸ ՄԵԿՆԻՆ Ս. ԵՐԿԻՐ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԵՆ



Ուխտաւորներու երկու խումբեր Արեւմտեան Թեմի երկու ծուխերէն, մէկը՝ Գօսիկ Մեսայի Ս. Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովիւ, Արժ. Տ. Մուշեղ Աւ. Քհնյ. Թաշճեանի ու մասնակցութեամբ 40 ուխտաւորներէ, Օրէնճ Գառնիի եւ Լոս Անճելոսի շրջաններէն, կը ճամբորդեն Սեպտեմբեր 19ին, Լոս Անճելոսի միջազգային օդակայանէն եւ կը վերադառնան Սեպտեմբեր 29ին: Ճամբորդական ընկերութիւնն է, George's International Tours, San Diego and Jerusalem:

Ուխտաւորաց երկրորդ խումբին առաջնորդն է՝ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Աշ, հոգեւոր հովիւը Սան Ֆրանսիսքոյի Ս. Յովհաննէս եկեղեցու, 35 հոգիներու մասնակցութեամբ, ծովածոցի շրջանէն: Խումբը կը մենի Սան Ֆրանսիսքոյի միջազգային օդակայանէն, Սեպտեմբեր 23ին, եւ կը վերադառնայ Հոկտեմբեր 3ին: Ճամբորդական ընկերութիւնն է՝ Nour Travels, Jerusalem:

Ուխտաւորները միասնաբար պիտի մասնակցին, Կիրակի Սեպտեմբեր 25ին, Խաչվերացի Տօնին

(Երուսաղէմի Տոմարով) հանդիսաւոր Ս. պատարագին եւ երեկոյեան թափօրին, նախագահութեամբ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի, Երուսաղէմի հայոց պատրիարքին: Թափօրի ընթացքին, պատրիարք հայրը ձեռնին պիտի ունենայ թանկագին քարերով հին ճաճանչ մը, որուն մէջ պահուած է Քրիստոսի խաչափայտէն մասունք մը:

Ս. Երկիր իրենց կեցութեան ընթացքին ուխտաւորները պիտի շրջագային Երուսաղէմ եւ զանազան սրբատեղիներ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի կեանքին հետ կապ ունեցող, ինչպէս նաեւ Ս. Յարութեան Տաճար, Ձիթենեաց Լեռ, Գեթսեմանի Ձոր, Ս. Աստուածածնի Գերեզմանը, Բեթղէհէմ, Յորդանան գետ, Երիքով, Փորձութեան Լեռ, Մեռեալ Ծով, Գալիլիոյ Ծով, Նազարէթ, Հայֆա, Եաֆա, Թէլ Աւիլ եւ այլն. նաեւ պիտի այցելեն սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը, հայոց վանքը եւ պատրիարքարանը եւ այլ հայկական սրբատեղիներ, որոնք քրիստոնէութեան առաջին դարերէն հայոց սեփականութիւնը եղած են:

«ՔԱԶ ՆԱԶԱՐ»Ի 17ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ

Յառաջիկայ Կիրակի Սեպտեմբերի 25ին ժամը 3-12 տեղի պիտի ունենայ «Քաջ Նազար» հանդէսի ու հեռուստատեմի 17րդ թելեթոնը, ի նպաստ Սուրբ Ծնունդի հիմնադրամի Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանադամ երեխաներու մանկատուներու վերանորոգութեան:

Անցեալ տարուան թելեթոնէն հաւաքուած գումարն առաւելաբար յատկացուած էր Կիւմրիի եօթը Հրեշտակներ մանկապարտէզի նորոգութեան, որուն պաշտօնական վերաբացումը տեղի ունեցած է Յունիսի 1ին, 2016:

Քաջալերենք ազգասիրական եւ մարդասիրական այս օգտաշատ նախաձեռնութիւնը:

ԿԱՐՕ ՄՈՒՐԱԴԻ ԶԵՐԹԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ ՆՈԿԱՌՏՈՎ

Գերմանիան ներկայացնող հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադը պրոֆեսիոնալ ուինգուլմ 30-րդ յաղթանակը տարել է նուկաուտով: Գերմանիայի Գոփինգեն քաղաքում կայացած մենամարտում 33-ամեայ Մուրադի մրցակիցը եղել է ուկրաինացի Եվգենի Մախտեիենկոն, որը 12-րդ ռաունդում պարտուեղ է տեխնիկական նոկաուտով: Հայ բռնցքամարտիկը նուաճել է WBA International թափուր գոտին:

Դա Կարո Մուրադի 34-րդ մենամարտն էր պրոֆեսիոնալ ուինգուլմ: Նա նախորդ մենամարտն անցկացրել էր այս տարուայ Յուենիսի սկզբնամասում, երբ առաջին ռաունդում նոկաուտի էր ենթարկել բուլղարացի էստեբան Տաբաբաբին:



«ՄԱՆՀԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵՂԻ» ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐՆ ՌԻՈՅՈՐԴԻՑ ՏՈՒՆ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԳՆԱՑՔՈՎ

«Մանչեսթեր Եունայթեդի» գլխավոր մարզիչ Ժոզե Մուրինյոն Անգլիայի առաջնության 5-րդ տուրում «Ուոլֆորդից» կրած պարտությունից յետոյ որոշել է իր ֆուտպոլիստներին տուն տանել ոչ թէ ակումբի աւտոբուսով, այլ՝ գնացքով:

Գնացքի կայարանում երկրպագուները լուսանկարուել են ֆուտպոլիստների հետ եւ ինքնագրեր վերցրել նրանցից: Այդ կերպ Մուրինյոն ցանկացել է աւելի շատ ժամանակ ունենալ թիմի հետ պարտությունը քննարկելու եւ առաջիկայ խաղերի մասին մտածելու համար, գրում է Daily Mail-ը:



Յիշեցնենք, որ Ուոլֆորդում «Մանչեսթեր Եունայթեդը» կրել էր երրորդ անընդմէջ պարտությունը (1:3): Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը վնասուածքի պատճառով չէր յայտարարուել խաղին:

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ. ԶԳՏԵԼՈՒ ԵՄ 4 ՏԱՐԻ ԱՆՑ ԿՐԿՆԵԼ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կրծքիս շքանշանը շատ ոգեւորող է ու պարտաւորեցնող: Այս մասին լրագրողների հետ ճեպագրույցում ասել է Ռիո-2016-ի օլիմպիական ախոջեան Արթուր Ալեքսանեանը, ով Ռիոյի մետալակիրները պարգեւատրման արարողութեան ժամանակ նախագահ Սերժ Սարգսեանի կողմից պարգեւատրուեց «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» առաջին աստիճանի շքանշանով:



«Նման պարգեւներն իսկապէս մեծ գնահատական են մարզիկի համար, իսկ իւրաքանչիւր մարզիկի համար իր աշխատանքի գնահատանքը շատ կարեւոր է: Ինձ համար, մասնաւորապէս, շատ ոգեւորող եւ պարտաւորեցնող է կրծքիս շքանշանը: Այս օլիմպիական ոսկով չեմ սահմանափակուելու, ձգտելու եմ աւելացնել աշխարհի եւ Եւրոպայի ախոջեանի մետալները, ինչպէս նաեւ 4 տարի անց կրկնել այս յաղթանակը», - ասել է Արթուր Ալեքսանեանը:

NEWS.am Sport-ի թղթակցի հարցին, թէ Երեւանում բնակարան նուէր ստանալուց յետոյ հնարաւոր է տեղափոխուել Երեւան, Արթուր Ալեքսանեանն ասաց.

«Ապագայի հետ կապուած դեռ ծրագրեր չունեմ: Ամէն ինչ հնարաւոր է, բայց դեռեւս ապրում եմ Գիւմրիում, իհարկէ՝ Երեւանում էլ եմ շատ լինում»:

Յիշեցնենք, որ Ռիոյի հայ մետալակիրները Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում պարգեւատրուեցին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի եւ ՀԱՕԿ նախագահ՝ Գագիկ Ծառուկեանի կողմից:

Սերժ Սարգսեանը Ռիո-2016-ի Օլիմպիական խաղերի մետալակիրներին, հաւաքականների մարզիչներին, անձնական մարզիչներին պետական շքանշաններով պարգեւատրեց, ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկեանը 1 միլիոն դոլար արժողութեամբ բնակարաններ նուիրեց Արթուր Ալեքսանեանին եւ Միհրան Յարութիւնեանին եւ 30-ական միլիոն դրամ օլիմպիական փոխախոջեաններին:

ԱՐՓԻՆԷ ԴԱԼԱԼԵԱՆԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆՈՅԵԱՆ ԿԱՐԱԶԴԱՏ ԼԱԼԱՅԵԱՆԸ՝ ԱՐԾԱԹԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Լեհաստանում աւարտուած ծանրամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան վերջին օրը Հայաստանը նուաճել է ոսկէ եւ արծաթէ մեդալներ:

Աղջիկների պայքարի մինչեւ 17 տարեկանների գերծանր քաշային կարգում (+69 կգ) Արփինէ Դալալեանը երկամարտի 213 կգ (89+124) արդիւնքով գրաւել է առաջին տեղը: Պոկոմ վարժութիւնից յետոյ Արփինէն չորրորդն էր, սակայն հրում վարժութեան արդիւնքում շրջանցել է



ՆԵՅՄԱՐ. «ԱՆՑԿԱՑՐԵԼ ԵՄ ՄԻ ՇԱՐՔ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲԱՅՑ ՈՐՈՇԵՑԻ ՄՆԱԼ ԲԱՐՍԵԼՈՆԱՅՈՒՄ»

Պրագիլիայի հաւաքականի յարձակուող Նէյմարը պատմել է, որ բանակցել է այլ ակումբների հետ, սակայն որոշել է մնալ «Բարսելոնայում»:



«Անցկացրել եմ մի շարք բանակցութիւններ, բայց որոշեցի մնալ «Բարսելոնայում», որտեղ երջանիկ եմ: Չեմ կարող անդրադառնալ ՊՍԺ-ի առաջարկին, քանի որ չեմ սիրում խօսել թուերի մասին:

Չեմ կարող ինձ պատկերացնել այլ ակումբում: «Բարսելոնայում» ես տանն եմ: Այժմ չեմ մտածում յետագայում մարզական կարիերա սկսելու մասին: Չնայած, բարդ է կանխատեսել, թէ ինչ կը լինի 10-15 տարուց», - Նէյմարի խօսքը մէջբերում է Marca-ն:

Աւելի վաղ լուրեր էին շրջանառուում, որ ֆրանսական ՊՍԺ-ն տարեկան 40 միլիոն եւրօ աշխատավարձ է առաջարկել 24-ամեայ պրագիլացուն:

ՊԵԼԵՆ ԲԱՑԱՏՐԵԼ Է, ԹԵ ԻՆՉՈՒ Է ՄԵՍԻՆ ՂԱՍԱՐՈՒՄ ԼԱԻՎՈՅՆԸ

Պրագիլացի լեգենդար ֆուտպոլիստ Պելեն անդրադարձել է «Բարսելոնայի» ուժբարկու Լիոնել Մեսիի ու Մադրիդի «Ռեալի» յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուի համեմատութեանը:

«Ռոնալդուն հիանալի ուժբարկու է, բայց Մեսին լաւագոյնն է աշխարհում: Կարող էի նշել նաեւ այլ ֆուտպոլիստների, սակայն Մեսին ամենակայուն խաղացողն է վերջին 10-15 տարում: Ի տարբերութիւն Ռոնալդուի, նա նաեւ հրաշալի փրկեցիքներ է», - Պելեի խօսքը մէջբերում է Sport.es-ը:

Յիշեցնենք, որ վերջին 6 տարիներին «Ոսկէ գնդակին» արժանացել են միայն Մեսիի ու Ռոնալդուի:

«ՌԵԱԼԻ» ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ ԶԻՆԵԴԻՆ ԶԻՂԱՆԸ ԽԱՄԵՍ ՌՈՂԻԳԵՍԻՑ ԳՈՐ Է

«Մենք հիանալի աշխատանք կատարեցինք խաղի առաջինից մինչեւ վերջին րոպէն, թէեւ սկզբնամասում խնդիրներ ունէինք: Շատ գոհ եմ խաղի Ռոգրիգեսի խաղից: Խօսքը ոչ միայն նրա խփած կոլի մասին է, այլ նաեւ ցուցադրած խաղի: Նա շատ լաւ տեսք ունէր եւ ես շատ ուրախ եմ նրա համար», - Զիլդանի խօսքը մէջբերում է AS-ը:

Յիշեցնենք, որ Կատալոնիայում կայացած խաղում Արքայական ակումբը յաղթել էր 2:0 հաշուով, իսկ խաղի Ռոգրիգեսն առաջին խաղակէսի վերջնամասում բացել էր հաշիւը:

մրցակիցներին: Նա երկամարտում մէկ կգ է գերազանցել երկրորդ տեղը գրաւած ռուս Դարիա Ռիազանովային:

Տղաների մինչեւ 17 տարեկանների գերծանր քաշային կարգում (+94 կգ) Վարազդատ Լալայեանը երկամարտի 335 կգ (155+188) արդիւնքով նուաճել է արծաթէ մետալ: Նա մէկ կգ է զիջել ախոջեանի տիտղոս նուաճած լեհ Յակուբ Վեգրզինին:

Յիշեցնենք, որ աւելի վաղ Լեհաստանում Եւրոպայի պատանեկան ախոջեան էին դարձել Կարէն Մարգարեանը (77 կգ, Մ-15) եւ Կարէն Աւագեանը (85 կգ, Մ-17), իսկ 94 կգ քաշային Յաշա Մինասեանը երկամարտի 246 կգ (112+134) արդիւնքով երկրորդ տեղն էր գրաւել մինչեւ 15 տարեկանների պայքարում:

Մայիս 28, Նոյեմբեր 29, Սեպտեմբեր 21 եւ Պետական Ստածողութիւն

Շարունակուած էջ 6-էն

«Անկախ չէ Հայաստան... Բայց մի՞թէ մենք երբեւիցէ կարծե՞լ ենք, թէ կարող ենք կազմել իսկապէս անկախ (այս եւ յետագայ ընդգծումները Քաջագունների կողմէ են. ՅՏԴ) պետութիւն: Մի՞թէ չգիտէի՞նք նոյն իսկ մեր ոգեւորութեան ու արբեցման գազաթնակէտին՝ որ անկախ չենք կարող լինել, որ անխուսափելիօրէն «կախուած» պիտի լինենք մէկից... Ի հարկէ, գիտէինք եւ այդ գիտակցութեան հետեւանքով էր, որ պետութիւն կազմելու առաջին իսկ օրից այնքա՞ն որոնեցինք մի «մանդատէօր»: Հարցը նրանումն էր միայն, թէ ո՞ր աստիճանի կախուած պիտի լինենք եւ ումի՞ց: Հարցը լուծուեց յօգուտ Ռուսաստանի եւ Հայաստանի պետական անկախութիւնը սահմանափակուեց Մոսկովայի շատ ակտիւ վերահսկողութիւնով: Գուցէ մեզ համար գերադասելի էր Ամերիկան... Բայց պատմութիւնն ունի իր յօգիկան (տրամաբանութիւնը. ՅՏԴ), որ մենք անկարող ենք փոխել. ամենաշատը որ կարող ենք անել (ու պէ՛տք է անենք), դա այն է, որ հասկանա՞նք, հաշուի առնենք ու օգտագործենք կարելիք: Խորհրդային Հանրապետութիւնը անկախութեան այն maximumն է, որին ընդունակ է Հայաստան այսօրուայ պայմանների մէջ: Եւ սա քիչ բան չէ: Յամենայն դէպս, այսօր Հայաստանի ներկան ու ապագան ապահովուած է շատ աւելի, քան էր 1920-ը. Նոյեմբերին, երբ մենք նստած էինք Երեւանում եւ ինքնենք էինք վարում պետութիւնը: Յիշի՛ր այն օրերը: Յիշի՛ր, որ օրհասական ժամին, երբ մենք սպառել էինք արդէն մեր վերջի ոչութիւնը, բայց կարող էինք զուլայնաբար կանգնեցին: Սա իրողութիւն է: Իրողութիւն է եւ այն, որ այսօր չկայ ոչ մի ոչոք, որ կարողանար փոխարինել Հայաստանում բոլորելիներին: Բոլորելիները պէտք են Յայաստանի... Կապելով մեզ Ռուսաստանի հետ, բոլորելիները ապահովեցին անկախութեան այն աստիճանն ու այն ձեւը, որոնք միակ հնարինն են այսօրուայ պայմանների մէջ ու դրանով փրկեցին ապագան... Մեր գործն է խոչընդոտ չհանդիսանալ, եթէ մէկը գալիս է անելու այն, ինչ որ չենք կարողացել ու չենք կարողանում անել ինքներս:»

Կարողա՞յք ու ընկալել էտք վերելի հատուածը, ամէն մէկ սրտցաւ հայ վստահաբար պիտի գիտակցի, որ եթէ սփիւռքահայ ղեկավարներ անսային Քաջագունների իրապաշտ եւ ազգասէր թելադրանքներուն եւ ըստ այնմ դաստիարակէին շարքերը, փոխանակ իրենց կորսնցուցած իշխանութիւնը վերադարձնելու մարմաջին տարուած պառակտիչ ու քանդիչ գործունէութիւն ծաւալելու, մարդկային թէ տնտեսական ինչ ահաւոր կորուստներ, եկեղեցական թէ քաղաքական ինչ ահաւոր պառակտումներ ինայուած պիտի ըլլային սփիւռքահայութեան: Անդին, հայ հոգին «սովետականացնող» «վայստան»-ի մէջ, հակառակ Միտախոնեան խթակութեանց, հակառակ Բ. Աշխարհամարտին տուած մեր անհամեմատօրէն մեծ մարդկային կորուստ-

ներուն, հայ կեանքը պիտի բարգաւաճէր ու զարգանար, ինչպէս որ նախատեսած էր Քաջագունին: Ժամանակը ցոյց տուաւ, որ սովետական օտար կարգերու տակ աւելի ազգասէր գործունէութիւն ծաւալեցաւ, քան թէ սփիւռքեան ազատ պայմաններու մէջ, ուր ազգային պիտակին տակ հատուածական շահեր հետապնդուեցան:

1991 Սեպտեմբեր 21

1923-ին Քաջագունի կը նախատեսէր՝ «Երբ ներկայ քաղաքական պայմանները փոխուին հիմնովին կամ խոշոր չափերով, հաւանական է, որ Խորհրդային իշխանութիւնը՝ իբրեւ անհարազատ ու անհամապատասխան հայկական իրականութեան, հարկադրուած լինի տալ իր տեղը ուրիշ ոչութիւն, ուրիշ քաղաքական ու հասարակական խմբակցութիւններին. նա եւս կատարած ու ակարատեւ կը լինի իր դերը: Բայց Դաշնակցութիւնը չէ, որ պիտի փոխարինի բոլորելիներին: Նոր դրութիւնը նոր պահանջներ կ'առաջադրի: Քաղաքական (ու մանաւանդ լեզուափոխական) կուսակցութիւնները չեն կարող կերպարանափոխուել անվերջ, ամէն օրուայ պահանջի համեմատ: Նրանք ծագում են որոշ շրջաններում՝ որոշ գործ որոշ միջոցներով կատարելու համար. երբ դրութիւնը փոխուում է հիմնովին, պէտք է փոխուին եւ քաղաքական խմբուները: Կուսակցութիւնը չի կարող ազատուել իր անցեալից, որքան էլ կամենայ. անցեալը միշտ անդրադառնալու է ներկայի վրայ, կաշկանդելու է այն... Նոր գիծին չի կարելի լեցնել հին տիկերի մէջ. դիտէք որ տիկերն էլ կը պատուեն, գիծին էլ կը թափուի:»

1991-ին փլուզուեցաւ Խորհրդային Միութիւնը ու Քաջագունների նախատեսած «ուրիշ քաղաքական խմբակցութիւն» մը՝ Հայոց Համագային Շարժումը եկաւ փոխարինելու բոլորելիները: Բայց Դաշնակցութիւնը, որ չէր անսած Քաջագունների իրապաշտ մտածողութեան եւ կը համեմար իր կուսակցական շահը գերադասելով պետական շահին, մերթ Քեմալական թուրքիոյ, մերթ Նացի Գերմանիոյ եւ մերթ Ամերիկեան հովանաւորութեամբ տիրանալ Հայաստանի իշխանութեան, որի դեր եւ անխնայ պայքար բացաւ ՀՀԾ-ի դէմ: Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակման նախօրեակին, ՀՅԴ նոյնիսկ դէմ արտայայտուեցաւ Հայաստանի անկախութեան, հակառակ անոր, որ ի տէս Խորհրդային Միութեան սպասուող փրկուման, այլ ընտրութիւն չկար մեր առջեւ, յար եւ նման 1918 Մայիս 28-ի դրութեան: Եթէ 1918-ին մեր ղեկավարները քաղաքական դաստիարակութեան եւ պետական կեանքի վարժութեան փորձը չունէին, ապա ինչպէս արդարացնել այսօրուայ բացթողումները եւ անցեալի փորձէն դասեր քաղելու մեր ներկայ ղեկավարները անընդունակութիւնը: Եթէ պատմութեան անիւր կարենանք ետ տանիլ մինչեւ 1991 թուականը եւ նոր ուժերն ու հիւնները, մէկդի դնելով իրենց հատուածական շահերը, առաջնորդուէին մեր պետական գերագոյն շահերով, կրնա՞ք տեսնել թէ ինչպիսի՞ Հայաստան մը կ'ունենայինք այսօր: Կարդացէ՛ք Քաջագունների հետեւեալ նկարագրութի-

ււնը. «Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողութեան տակ առնել թէ՛ օրէնսդիր մարմինը, թէ՛ կառավարութիւնը: Մենք քաջութիւն չունէինք (ոչ էլ կարողութիւն) բացէ ի բաց կուսակցական դիկտատուրա յայտարարելու. բայց եւ չէինք ուզում մնալ պարլամենտական կարգերի սահմանի մէջ ու փորձ էինք անում իրականացնել Հայաստանում իթիթիհատականների գործելակերպը՝ կուսակցական դիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ քողարկուած:» Նոյնը կարելի չէ՞ ըսել այսօրուայ Հանրապետական կուսակցութեան գործելակերպի մասին: Կրնա՞ք տեսնել թէ ու՞ր կ'երթանք այս ընթացքով:

Փոխանակ ազգի ուժերը համախմբելու յօգուտ մեր պետականութեան զարգացման, ոչ միայն կը խոչնդոտենք գիրար, այլ նոյնիսկ չենք վարանի որ դիմել եղբայրասպանութեանց, յանուն մեր հատուածական շահերուն: Կարծէ՛ք Ա. Հանրապետութեան եւ Սփիւռքի կազմաւորման տարիներու եղբայրասպանութիւններու պատճառով վնասները բաւարար չըլլային, Գ. Հանրապետութեան օրով ալ անոնք շարունակուեցան, հասնելու մինչեւ մեր պետականութեան հիմքերը խախտող Հոկտեմբեր 27-ի Ազգային ժողովի սպանդը: Ի՞նչու համար, Քաջագունների օրինակով, ՀԱՅ մարդը չի խօսի մեր ղեկավարներուն մէջ. «Հայ մարդն է, որ խօսում է իմ մէջ. ահա ամբողջ բացատրութիւնը իմ մտքի ուղղութեան. ուրիշ գաղտնիք միք որոնի, կը սխալուէք: Հայ մարդն է, որ դատում է իմ մէջ, կը ռուս, համեմատում ու ընտրութիւն անում: Կուսակցութիւնը ինձ համար արժէք է ունեցել այնչափ միայն, որչափ ընդունակ է եղել վարելու մի որոշ դատ, ո՛չ աւելին: Ինքն ըստ ինքեան իմ պաշտամունքի առարկայ չի եղել կուսակցութիւնը... Հոովմը ինձ համար շատ աւելի թանգ է, քան Կեսարը. աւելի ճիշդը՝ Կեսարը թանգ է այնչափ միայն, որչափ նա պէտք է Հոովմին:»


Լիբանանի Հայկազեան Համալսարանի քաղաքագիտութեան իմ ուսուցիչ՝ Շաւարշ Թորիկեան, 1968-ին կը գրէր. «Ազգը կազմող անհատներուն գլխաւոր յատկանիշը այն է, որ գիրենք հետաքրքրող հիմնական (ընդգծումը իրմէ. ՅՏԴ) հարցերու շուրջ նոյն ձեւով մտածեն: Այս հոգեկան միութեան համար հիմնական է նախ մեր վերջին հարիւր տարուայ պատմութիւնը, այսինքն մեր անմիջական անցեալը

տալ գիտականօրէն եւ քննականօրէն: Գաղափարական տարբերութիւնները դժբախտաբար գունաւորեցին պատմական մեկնաբանութիւնները, տեղ-տեղ նոյնիսկ խեղաթիւրեցին պատմական դէպքերը: Անցեալի ճշգրիտ ճանաչումովն է որ միայն կրնանք ծրագրել ապագան՝ ազգովին եւ իմաստութեամբ:» Գրեթէ յիսնամեակ մը անցած է այդ թուականէն, բայց դժբախտաբար տակաւին շատ հեռու ենք հասկնալիք եւ իրականացնելիք այդ հիմնական առաջադրանքը՝ ազգովին եւ իմաստութեամբ ծրագրել մեր ապագան: Ե՞րբ պիտի գայ այն օրը, երբ հատուածական քանդիչ մտածողութիւնը պիտի փոխարինուի ազգային-պետական կառուցողական մտածողութեամբ: Ե՞րբ պիտի գայ այն օրը, որ հայ մարդը դուրս պիտի գայ անմիջական շահ մը կորցելու իր անձնասէր մտածողութիւնէն եւ գիտակցի որ ինք մէկ մասնիկն է հայ ազգին, որուն բարգաւաճումը լաւագոյն ապահան է իր ապահով ապագային: Ե՞րբ պիտի գայ այն օրը, որ հայ մարդը մե՞ծ ուսումն մը կատարէ անձնասիրութիւնը դեպի ազգասիրութիւնը:

Հայաստանի Գ. Հանրապետութիւնը 25 տարեկան է, բայց դժբախտաբար մեր պետականութիւնը նահանջի մէջ է: Անցնող 25 տարիներու ընթացքին, երկիրը կիսով պարպուած է իր բնակչութիւնէն եւ մնացածն ալ կքած են միլիառաւոր տղարներու արտաքին պարտքի տակ: Բացի սակաւաթիւ անհատներէ, որոնք այդ գումարներէն աւելին կեղեքած են երկրէն ու ժողովուրդէն եւ դուրս հանած: Երկրի ռազմավարական նշանակութիւն ունեցող աղբիւրները (resources) մեծամասնութեամբ անցած են օտարի ձեռքը ու մեզ դարձուցած անոր ենթակայ: Հայաստանի քաղաքացիին ապահով ու արժանապատիւ ապագայ չի տեսներ իր իսկ հարազատ հայրենիքին մէջ: Հայ ժողովուրդի երեք չորրորդը ցրուած է աշխարհի տարածքին ու ենթակայ է ձուլման եւ ալյասքուման:

Ո՞ր օրուան կը սպասենք քննական վերլուծութիւնը կատարելու անցնող 25 տարիներու մեր երթին եւ լուծումներ որոնելու: Ո՞ր օրուան կը սպասենք բարձրաձայնելու, որ ազգովին վտանգուած ենք եւ անսպասող միջոցներու պէտք է դիմենք վտանգին առաջը առնելու համար: Ո՞ր օրուան կը սպասենք, որ ՀԱՅ մարդը խօսի մեր մէջ, դատէ, կըռէ եւ ըստ այնմ գործէ:

Ե՞րբ պիտի սթափինք եւ կասեցնենք այս գահավէժ ընթացքը:



MEHER BABIAN, D.D.S.

General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
 Խոստումներ կու տաս հարազատներուդ եւ սակայն չես յարգեր, յուսահատեցնելով զանոնք: Երբեմն պէտք է առանց տրտնջալու ընես ամեն ինչ: Սիրտդ շատ բարի է սակայն ինքզինքդ արտայայտելու դժուարութիւններ կ'ունենաս:
 Բախտաւոր թիւերդ են: 1,14,25,27,31

ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
 Ընտրութիւններդ թող յարմար ըլլան ընտանիքիդ անուըն մաքուր պահելու համար: Անհնար բաներ կ'առաջարկես սիրելիիդ եւ կը պահանջես որ քեզի մտիկ ընէ: Գոհացիր աշխատակիցներուդ դանդաղ գործելակերպէն:
 Բախտաւոր թիւերդ են: 8,11,24,32,33

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
 Կարողութիւններդ ցոյց տալու համար պէտք չ'ունիս չափազանցութիւններու երթալու, գործիդ արդիւնքը կը փաստէ զանոնք: Ունեցած ազատութիւնդ չարաչար մի գործածեր, զուսպ եղիր ապրելակերպիդ ու վարուելակերպիդ մէջ:
 Բախտաւոր թիւերդ են: 1,7,16,25,30

ԽԵՑՁԵՏԻՆ Յունիս 21-Յունիս 22
 Չգիտցած բանդ մի պնդեր եւ միշտ ուշադրութեան կեդրոն ըլլալ մի փորձեր, թոյլ տուր ուրիշներուն իրենց կարծիքները արտայայտելու: Վրէժխնդրութիւնդ զսպելով՝ աւելի յաղթական դուրս կու գաս եւ կացութիւնը կը փրկես:
 Բախտաւոր թիւերդ են: 15,18,20,24,29

ԱՌԻԺ Յունիս 23-Օգոստոս 22
 Այս աստղին տակ ամուսնացած զոյգերը ընդհանրապէս կը համաձայնին եւ կը յարմարին իրարու: Ինքնակեդրոն եւ ինքնագով ըլլալով, մարդոց կրնաս հեռացնել քեզմէ: Կարճ ճամբորդութիւն մը ունիս ընտանիքիդ անդամներուն հետ:
 Բախտաւոր թիւերդ են: 6,12,28,31,33

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
 Իւրայատուկ զօրութիւն ունիս մարդոց գրաւելու եւ համոզելու: Անօրէն արարքի մը պատճառով կրնաս դատարան ներկայանալ: Վտանգաւոր արկածախնդրութիւններէ զոյշ եղիր: Շաբաթավերջը շատ հաճելի պիտի ըլլայ:
 Բախտաւոր թիւերդ են: 4,17,21,30,35

ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
 Անձ մը հոգածութեանդ պէտքը ունի եւ կը սպասէ քեզի: Գէշ բարեկամներու վարմունքներէն մի վարակուիր, հաստատ մնայ սկզբունքներուդ վրայ: Հարցի մը նկատմամբ պիտի պայքարիս՝ սակայն պիտի յաղթահարես զայն:
 Բախտաւոր թիւերդ են: 9,19,26,28,34

ԿԱՐԻԾ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
 Ճակատագրական որոշում մը ունիս առնելու սակայն կը խուսափիս անոր մասին մտածելէ: Ժամանակն է որ քայլդ առնես շիտակ որոշում մը առնելու: Հանդիպում մը կրնաս ունենալ բարձրաստիճան կառավարական անձնակազմին մը հետ գործի մասին:
 Բախտաւոր թիւերդ են: 1,13,22,27,31

ԱՂԵՂՆԱԻՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
 Կեանքդ փոխուելու վրայ է, սպասուած բան մը պիտի իրականանայ, ուրախութիւն պատճառելով ընտանիքիդ անդամներուն: Արուեստասէր անձ մըն ես, մի վարանիր երազներդ հետապնդելու: Անձ մը քեզ շատ կը սիրէ:
 Բախտաւոր թիւերդ են: 5,18,24,30,33

ԱՅԾԵՂՋԻՐԻ Դեկտեմբեր 22-Յունուար 19
 Ինչ բանը կարելու է քեզի համար կեանքդ սահուն եւ ուրախ ապրելու համար, հետեւէ զգացումներուդ: Փորձառութիւններէդ օգտուելով՝ սխալներդ շուկէ: Գործի պաշտօնդ մի՛ շահագործեր գործակիցներուդ հետ կոշտ վարուելու:
 Բախտաւոր թիւերդ են: 3,14,17,25,26

ԾՈՎԱԼՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
 Ընտանիքիդ հանդէպ ունեցած սերդ քեզ կը մղէ ընելու անկարելին, ուրախ պահելու զիրենք: Մեծ բեռ մը ուսէդ պիտի իյնայ այս շաբաթ, քեզ վերջապէս հանգչեցնելով: Մի մտածեր անցածին վրայ, մոռցիր անցեալը եւ աչքերդ սեւեռէ դէպի ապագայ:
 Բախտաւոր թիւերդ են: 2,8,17,22,33

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
 Բարեկամներդ լաւ ընտրէ եւ ուսումստի՞ն անոնց նկարագիրները զաղտնիքներդ բաժնեկցելէ առաջ: Աշխատելու սերդ քեզ կը մղէ երկար ժամեր անցընելու գրասենեակիդ մէջ: Այցելութիւններ պիտի ծրագրես հիմ բարեկամներու հետ:
 Բախտաւոր թիւերդ են: 7,15,24,29,33

ՈՂՋՈՅՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

Նախմբութեան հրավառութիւնն էր հրապարակում, հազար թմբուկ էին զարկում, հազար շեփորներ հնչում, ազատութեան լոյսի հեղեղ էր հոսում հրապարակում:

Տարին էր 1990, ամիսը Օգոստոսի 23: Ազգային ժողովի սրահում էին հայերի կողմից ընտրուած բազմախումբ պատգամաւորները: Սրահի դռան փեղկերն էին լայն բացուած, Հայոց Հայրապետն էր յուշիկ քայլերով անցնում նրա ճեմուղիով: Պատգամաւորները, խնդուն հայեացքներով, երկարատեւ ծափահարութիւնով ողջունում իրենց Սրբազան Հայրապետին: Օրն էր անմահ լինելու, այն գրուելու էր Հայոց պատմութեան նոր դարաշրջանի մատենանում: Հայերը, երկրի «Անկախութեան Հռչակագիր»-ն էին ընդունելու, այն օրհնելու էր իրենց անմահ ու անչափ բարի Հայրապետը:

Հայոց Հայրապետը, Ղեւոնդ Երէցի նման, իր հաւատքի խաչը վեր պահած, ազգի «Անկախութեան Հռչակագիր»-ի օրհնութեան աղօթքն էր մրմնջում: Իր նախնիների մեհեններում հայոց թագաւորների թագադրման օրհնութեան նման, ձայնն էր հպարտ ու խրոխտ հնչում: Արեւի ծիածանի նման հազար լոյսի ժպիտ էր հոսում դէմքից, ակներում տիեզերքի աստղերի փայլն էր շողում: Խաչը տարածելով չորս դին, օրհնում ազգի անկախութեան ճամբան, որ այն սահուն լինէր, ոչ մի թշնամի մարդ չհամարձակէր այն կոխել, նրա հողին խոնջանքի քրտինք հոսէր, բերրութիւն, խաղաղութիւն լինէր: Ոտքի էլած պատգամաւորները խելացի ծափահարել էին, հազար ողջոյն լղել իրենց սիրելի Հայրապետին:

Ամպիոնին էր մօտեցել մօրուքաւոր մի սիրուն երիտասարդ տղայ, Արամ Մանուկեան, որի անունը իր ցեղի անմար լոյսի հետ գնալու էր յաւերժութիւն: Արամը ընթերցում էր «Անկախութեան Հռչակագիր»-ը, ձայնն էր յախուռն, այն հասնում էր իր երկրի արեւելք-արեւմուտք թշնամիներին, փորձեցին, պիտի փորձեն այն ջնջել, սակայն իբրուր...:

Սովետների երկրում ծաւալուող ազգային-ազատագրական պայքարը, անկախութեան տիրանալու շարժումները, զինուած հակամարտութիւնները պատգամում էին նրա փլուզման հոգեվարքը: Այդ պայմաններում, երկրի կուսակցական վերնախաւը չհանդուրժեց նման իրավիճակը: 1991 թուականի Օգոստոս ամսին, երկրի ուժային հիմնարկների ղեկավարութիւնը պետական յեղաշրջում կատարեց, իշխանութիւնից զրկեց կամազուրկ Գորբաչովին: Անհրաժեշտ էր մի համարձակ մարդ, որը ղեկավարէր համաժողովրդական դիմադրութիւնը: Բարեփոխիչ Բորիս Ելցինը վերցրեց

այն ղեկավարելու պատասխանատուութիւնը, հրասայլի վրայ էլած ժողովուրդին պայքարի կոչեց, կազմալուծուեց երկրի փտած համակարգը, Գորբաչովին նորէն իշխանութեան բերին: Ելցինի ձեռնարկած յետագայ բարեփոխումներով, 1991 թուականի Դեկտեմբերի վերջին վաւերացուեց Սոցիալական Միութեան փլուզումը: Պատմութիւնը կ'արժեւորի Բորիս Ելցինի գործունէութիւնը, նրան կը դասի Ռուս մեծ բարեփոխիչները:

Ոչ թէ միայն երկու հայեր էին հանդիպել իրարու, այլ միլիոն-միլիոն հայեր էին իրենց արեւելեան կողմն աշխարհի ելել նորէն «Նոր Հայաստան» ստեղծելու: Անկախ պետականութեան վերահաստատման գործընթաց էին նախապատրաստել, խորհրդարանի ընտրութիւններ կատարել, նոր խորհրդարանի նախագահ ընտրել: 1991 թուականի Սեպտեմբերի 21-ին, հայերը ընտրական տեղամասեր էին գնացել, «ԱՅՈ» ասել Հայաստանի վերանկախացմանը: Նորէն տիրեցին մայրենի երկրին, չքացաւ ստրկութեան լուծը, Հայերէնը նորէն եղաւ պետական լեզու: Վահագնի «Յարդազողի ճանապարհ»-ի աստղերի լոյսը վառուեց հայրենի երկնակամարում: Եթէ Միութիւնում կատարուած յեղաշրջումը իրականանար, ռազմական իշխանութիւնը կը մարէր ազատական շարժումները, անկախութեան ձգտումները: Հայաստանը նորէն ծիծաղում էր, նորէն ազատութեան հրապարակում հազար թմբուկ զարկում, հազար շեփոր հնչում, արի մարդիկ, յեղափոխականների, հերոս մարդկանց անուններով կամաւորական խումբեր կազմած կուռի գնում:

Իմաստուններ երկիր չեղափոխում, անարգ մարդիկ կողոպտում են այն: Փլուեց հին հասարակարգի անտեսական դրութիւնը: Երկրի աշխատաւորների, հողի մշակների եօթանասուն տարիների արարած հարստութիւնը ազգի սեփականութիւնը դարձնելու փոխարէն, անարգ անհատներ կողոպտեցին այն: Առաջին նախագահ, վարչապետ, շատ ուշացան նոր դրամական միաւոր ներդնել, արժէքագրկուեց Ռուբլին, այն նորով փոխանակեցին երկու հարիւր ամգամ նուազով, սնանկացրին հայրենի ժողովուրդը: Երեք նախագահներն էլ վատ կառավարեցին, փլեցին անտեսութիւնը, մարդկանց գոյատեւելու հնարաւորութիւնը: «Սասունի Մուռ» մարդիկ ասում են՝ իշխանութիւնը ժողովուրդին վերադարձրէք, զգաստացել են, ասում են «Ազգային Համաձայնութեան» կառավարութիւն կը ստեղծենք, ինչպէս, ե՞րբ:

Ողջոյն Հայաստանին, երանի նրանց ովքեր իրենց Արեւմտեան կողմն աշխարհի ազատութեան կուռի կը գնան:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

ԵԹԷ ՍԵՌՆԻ ՍԵՐ ԴԱՏԸ, ՈՒՐԻՇԸ ՉՍԵՂԱԴԻՆԵՐ

Շարունակուած էջ 13-էն

ունեցած, այսքան ալ տեղ չէ եղած աշխատելու եւ արդիւնքներ ձեռք ձգելու, սակայն մերոնք թմրած են եւ խաղ կը կարծեն, բոլոր եղածները: Յաւալի է, մենք կարծես մեռած ենք: Մենք կը դիտենք ինչպէս մարդիկ մեր երկիրը կը կործանեն, մեր անունով կը խօսին՝ իրենց հաշիւներէն ելլելով եւ մերոնք միայն ու միայն դիտողի վիճակի մէջ են: Յաւալի է, բայց տակաւին կը յուսամ թէ որոշ երիտասարդներու վրայ ազդեցութիւն կը կրնան ունենայլ», ըսաւ Սարգսեան: «1981-էն ի վեր, Թուրքիոյ մէջ կ'աշխատիմ: 90-ականներուն, արիւններուն մէջ կ'աշխատէի, այդ հարցերով կը զբաղէի: 2004-էն հայերու հետ հանդիպման առիթը ունինք, կրնայինք մեր ձայնը հնչեցնել, ոչ իբր թրքահայատակ կամ հայաստանցի, այլ իբր՝ սփիւռք: Մենք պահանջատէր կրնանք ըլլալ խոհեմ ձեռով, քայլ առ քայլ: Պիթիւսի մէջ կանգուն եկեղեցիներ ունինք կրնանք յանձն առնել զանոնք, միջեւ աւելի ճշդապահ շրջանակներու կազմով, ըլլան անոնք թրքական պետական կամ թէկուզ դուրսի աշխարհէն, որ օրինական ձեռով մեզի յանձնեն այս եկեղեցիները: Շատ կանգուն եկե-

ղեցիներ կան, որ քիւրտերը ամբողջ 100 տարի պահած են, բայց մերոնք հետաքրքրուած չեն: «Փոքրիկ խնձորգիւնի», -10-րդ դարու եկեղեցին, տակաւին կանգուն է տեղւոյն բնակիչներուն շնորհիւ. կ'արժէ շնորհակալութիւն յայտնել անոնց, որովհետեւ շատ դիւրին էր, իրենց համար եկեղեցւոյ մը շուրջը ոսկի գտնելու նպատակով քանդելը: Ընդհակառակը անոնք պահած են: Լաւ քիւրտեր ալ կան. արտօնեցէք, որ գոնէ այս եկեղեցիները կցենք մեզի հոգեպէս. ի՞նչ կըլլայ, եթէ հոն երթանք իբր տեղացի: Արդէն 2010-ին մեծ խումբով գացած ենք, եթէ կարենանք հոն մէկ եկեղեցի իբր պատիկ համայնք մը պահել ապագայ սերունդներուն համար մեծ գործ ըրած կ'ըլլանք: Ես կ'ըսեմ միայն մէկ հատը պահել՝ կենսաբան կ'արժէ, ուր մնաց 100 հատը պահես կամ նոյնիսկ աւերակներուն տէր կանգնիս: Բազմիցս խօսած եմ այս մասին եւ գրած, երբ այսպիսի խնդիր մը արածարծուի, մերոնք կը նախընտրեն լուռ մնալ», այս բոլորը «Արեւելք»-ին յայտնեց պատմաբան Արա Սարգսեան, միշտ հիմնուելով եւ վկայակոչելով իր անձնական փորձառութիւնը:

ԱՍՆ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ

Շարունակուած էջ 14-էն

րաժեշտ է յստակ ուղերձ յղել, որ բռնաճնշումներու ու կաշառակերութեան այս քաղաքականութիւնը այլեւս անհնար է հանդուրժել՝ անհատական պատժամիջոցներ սահմանելով Ատրպեյճանի բարձրաստիճան պաշտօնեաներուն նկատմամբ», - յորդորեց ընդդիմադիր գործիչի որդին՝ աւելցնելով, որ իշխանութիւններու ճնշումները ընդդիմախօսներէն ու լրագրողներէն հասած են անոնք ընտանիքի անդամներուն ու հարազատներուն: Մարդու իրաւունքներու պաշտպանութեան վիճակը Ատրպեյճանի մէջ հետզհետէ կը վատթարանայ՝ իր հերթին փաստեց 20 տարի առաջ այդ երկրի ԱՄՆ դեսպանի պաշտօնը զբաղեցուցած Ռիչըրտ Կոլարիչը: «Ես կ'ընդունիմ, որ Ատրպեյճան կարեւոր գործընկեր է Ուաշինկթընի համար կենսական յարաբերութիւններ ու ահաբեկչութեան դէմ պայքարի մէջ, սակայն այդ պէտք չէ ազդէ մեր սկզբունքներուն», - յայտարարեց ամերիկացի դեսպանը: «Ռազմավարական չարաբերութիւնները կը պահանջեն ընդհանուր արժէքներ, անոնց թուին են՝ հաւատարմութիւն մարդու իրաւունքներու պաշտպանութեան ու ժողովրդավարութեան: Մինչդեռ Ատրպեյճանի մէջ առաջարկուող սահմանադրական փոփոխութիւնները ա՛լ աւելի կը հեռացնեն երկիրը այս սկզբունքներէն: Անդրաբեմային դիւանագիտութիւնը այս պարագային արդիւնքներ չի տար», - շեշտեց Ռիչըրտ Կոլարիչը՝ յորդորելով պաշտօնական Ուա-

շինկթընին անցնիլ բաց ու հրապարակային քայլերու: «Անոնց կողքին կրնայ ըլլալ ամերիկեան դեսպանի ժամանակաւոր յետկանչը Ատրպեյճանէն՝ մարդու իրաւունքներու վատթարացող վիճակի շուրջ քննարկումներու նպատակով, այդ խախտումներուն համար պատասխանատու բարձրաստիճան պաշտօնեաներու հաշիւներու սառեցումը կամ վիզաներու արգելափակումը», - առաջարկեց դեսպան Կոլարիչը: «Քննարկումը վարող՝ գոնկրեսական յանձնաժողովի համանախագահ ձէյմա Մըք Գովերնը հետաքրքրուած է, թէ՛ ի՞նչ կրնայ ընել միջազգային հանրութիւնը Ատրպեյճանի ժողովրդավարացման նպատակով համար: «Առաջին հերթին պէտք է չ'օգնել գործող վարչակազմին՝ կեղծուած ընտրութիւններէն յետոյ այսպէս կոչուած յաղթողին շտապ շնորհակատութիւններ յայտարարեց Պատիճա իսմայիլովան՝ աւելցնելով. «Ոչնչացումը է, որ կեղծուած ընտրութիւններէն յետոյ առաջին շնորհակատութիւնները կու գան ժողովրդավար երկիրներէ»:

Աւելի քան մէկ ժամ շարունակուած քննարկման աւարտին գոնկրեսական յանձնաժողովի համանախագահ ձէյմա Մըք Գովերնը խոստացաւ ստացած տեղեկութիւնները փոխանցել գործընկերներուն: Ան, ի միջի այլոց, մէկն է այն չորս գոնկրեսականներէն, որ շրջանառութեան մէջ դրած են յատուկ բանաձեւ՝ կոչ ընելով պատժամիջոցներ սահմանել Ատրպեյճանի բարձրագոյն ղեկավարութեան հանդէպ՝ մարդու իրաւունքներու շարունակական խախտումներուն համար:

ԻՆՉ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿԱԾ Է

Շարունակուած էջ 14-էն

ինքը, շատ ճշգրիտ ըսաւ՝ իր բարեկամներուն դէմ պէտք է պայքարի, բոլորին պէտք է բերէ հարկային դաշտ, փչացածութեան դէմ պայքարի, հակառակը ըրաւ: Այսինքն, միակ հէքիաթն ալ այստեղ է, կ'ըսեն, բայց չեն ընէր»:

Կաշառակերութեան Դէմ Պայքարելու Համար Անհրաժեշտ են Համակարգային Փոփոխութիւններ Կաշառակերութիւնը Հայաստանի մէջ, համակարգային երեւոյթ է 25 տարիէ ի վեր: Նման երկարակեցութիւն պայմանաւորուած է քաղաքական իշխանութեան հետ՝ անոր ամուր կապերով: Փչացածութեան ազդեցութիւնը տեսանելի է ամէնուրեք:

«Խնդիրներ կը ստեղծէ ոչ միայն տնտեսութեան, այլ նաեւ հանրային բաժանմունքի համար, կը կլանէ հսկայական աղբիւրներ, որոնք կրնային ուղղուիլ աշխատակողմէն ստեղծման եւ զարգացման», - «Ա1+»-ի հետ զրոյցի ընթացքին, նշած է տնտեսագէտ Ատոմ Մարգարեան:

Փորձագիտական տուեաններով՝ Հայաստանի ՀՆԱ-ի 10 միլիարդ տոլարէն 1.5 միլիարդը ամէն տարի կը փոշիանայ: Այդ գույքները դուրս կու գան տնտեսական շրջանառութենէն, հանրային շահին ծառայելու փոխարէն՝ յայտնուելով այլ տեղեր:

«Բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք ունին որոշակի լիազօրութիւններ, ունին որոշակի դիրք՝ պետական կարգերու մէջ, ունին գործեր, կը շարաշահեն իրենց պաշտօնական դիրքը, կ'իրականացնեն իւրացումներ՝ պետական գնումներու եւ ելեւմտացոյց համակարգերու միջոցով», - կը նշէ տնտեսագէտը:

«Խնդիրը քաղաքական է: Նախ՝ պէտք է ձեւաւորուի լուրջ ծրագրային հիմք ունեցող օրինական իշխանութիւն: Պէտք է իրականացնել դրամագլուխի համայնքում, այսինքն՝ անոնք, որոնք գողցուած միջոցներ են, պէտք է յայտարարագորուին, պետութիւնը պէտք է ընդունի, ճանչնայ որպէս օրինական միջոցներ եւ այդ կէտէն սկսեալ իրականացնէ խստագոյն հաշուառում»,- էլք կ'առաջարկէ տնտեսագէտ Ատոմ Մարգարեան:

Ըստ անոր՝ այս մէկին զուգահեռ իշխանութիւնը պէտք է վերակազմուի յատկապէս հարկային ու մաքսային ոլորտներուն մէջ: Կարէն Կարապետեանի նշանակումը Ատոմ Մարգարեանին յոյսեր կու տայ:

«Մասնագիտական ղեկավարման տեսանկիւնէն ան ապացուցած է իր գործունէութեան արդիւնաւէտութիւնը, բայց ինչ որ հիմա իրեն առաջարկուած է եւ ինքը ստանձնած, քաղաքական ղեկավարման ծիրէն ներս է»:

Արդեօք նոր կառավարութիւնը կրնայ պայքարիլ փչացածութեան դէմ: Քաղաքացիներու տեսակէտները տարբեր են:

«Կան ոլորտներ, որտեղ հին մարդիկ կը շարունակեն գործունէութիւն ծաւալել ու իրենք փչացած ձեռով կը սարքեն այդ համակարգը, ինծի կը թուի՝ մէկ վարչապետի փոփոխութեամբ ոչինչ չի փոխուիր»:

Կայ նաեւ այսպիսի կարծիք. «Եթէ հասարակաց տան կանանց փոխեն, այդ հասարակաց տունը՝ մշակոյթի օջախ չի դառնար»:

Փչացածութիւնը Հայաստանէն արմատախիլ ընել հնարաւոր է, կը պնդեն քաղաքացիները: Աւելցնելով՝ անոր հասնելու համար անհրաժեշտ են համակարգային փոփոխութիւններ:

ՑԱՒԱԿՑԿԱՆ

ՍԻՐԱՐՓԻ ՆԱԶԻՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնն ու «Մասիս» շաբաթական կազմը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Տիար Վարդան Նազիրեանին:

ՑԱՒԱԿՑԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ եւ ԱՆԴՐԱՆԻԿ ՆՈՐԱՇԽԱՐ ՀԵԱՆԻ մահերուն առիթներով Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալներու ընտանեկան համայն պարագաներուն եւ առ այդ \$100 տկը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

ՑԱՒԱԿՑԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեանին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»-ին:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1066 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Մասիս»-ի հաւատաւոր ընթերցող մը գնահատելով թերթի բովանդակութիւնն եւ գաղափարական ուղին՝ \$100 կը նուիրէ անոր բարգաւաճման ֆոնտին:

Լուսանկարներ 25-ամեակի շքեղ փառատոնով նշուեցաւ Անկախութեան 25-Ամեակը (Լուսանկարներ)

